



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### **Usage guidelines**


Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### **About Google Book Search**

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>



ԳՐԱԴԱՐԱՆ


ԳՐԻԳՈՐ ԱՊՈՍՏՈՍՆԻ

Վարդաթ/ն. 227/231



34

ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿՈՒՆԻՔ





Shovrean, M.

G. Khalateantsi

Գ. ԽԱԼԱԹԵԱՆՑԻ Հայօժս...

# “ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿՈՒՆԻՔ

Մ. ԻՈՐԵՆԱՑՈՒ ՀԱՅՈՑ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ե Ա Ն Մ Է Ջ „

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Մ. ՇՈՋՐԵԱՆԻ



ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՎԱՆՆԵՐ
Կարգաթիվ... 222

ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ


1904

Grad

FREN

865

BUHR





CRAD  
ELEV  
10.99

## ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Հազարեան նեմարանի պրոֆ. Գր. Խալատեանց նա-  
բերումն լայն ընծայեց իւր մի ստուար երկատիրու-  
թիւնը in 8°. բաղկացած 556 էջերէց, որի խորագիրն  
է՝ « Հայոց Արշակունիք Մ. Խորենացու Հայոց Պատ-  
մութեան մէջ: Փորձ ազբիւրների քննադատութեան:  
Մասն I - Հետազոտութիւններ. մ. II - նիւթեր »:  
Մտպիւթ 1903: Հեղինակի յառաջարանը և նիւթերի  
ցանկը գրուում են 12 էջ. բուն հետազոտութիւնները  
- 397 էջ. նիւթերը 143 էջ:

Երեք էջ յառաջարանում յարգելի պրոֆեսորը այն  
միտքն է յայտնում, թէ Խորենացու Հայոց Պատմու-  
թեան նուիրեալ քննութիւնները մինչեւ այժմ ընդգր-  
կում էին միայն առանձին հաստատման, ուրայն գլուխ-  
ներ, առանց շօշափելու նորա պատմական ծուծը, ամ-  
բողջութիւնը: Ուստի հեղինակի կէտ նպատակն է սոյն  
երկում ուսումնասիրել Խորենացու Պատմութիւնը գո-  
րա բոլոր ծաւալով, հետեւել նորան քայլ առ քայլ,  
գտնել, սրլափ հնար է, նորա բուն ազբիւրները, բա-  
ցատրել նորա վարմունքը գոցա վերաբերութեամբ: Այս  
եղանակով, թւում է նորան, կարելի է ամբողջու-  
թեամբ ըմբռնել հայ պատմագրի երկը և հասնել հա-  
սարակաց և զնոողական եզրակացութիւններին: Այ-  
նուհետեւ Պ. Գր. Խալատեանցը կրկնելով իւր առա-  
ջին երկում (հրատ. 1896 թ.) յիշուած հինգ եզրակա-  
ցութիւնները շարունակում է այսպէս. « ներկայ հե-  
տազոտութիւնը նուիրուած է Խորենացու երկի երկ-  
րորդ կամ պատմական մասին, վերաբերեալ Հայոց Ար-  
շակունեաց. և գա ընդգրկում է Հայոց Պատմութեան  
մասամբ Երկրորդ և ամբողջովին Երրորդ գիրքը:

Տակաւին Գուտշիդի է մանաւանդ Կապիերի յուզումների շնորհիւ խախտուեցաւ ււանդական հայեացքը ժամանակի խնդրի մասին, թէ երբ էր սպրում Մ. Խորենացին: Իմ երկրորդ հետազոտութեանս մէջն եւս նպատակ է: ոչ Քիւլմի հաստատել նոր փաստերով յիշեալ քննադատների եզրակացութիւնները, այլ է մանրամասն ուսումնասիրութեամբ ու ուշիմ ստուգութեամբ բացատրել մի կողմից, ըստ չափու կարողութեան, մեր հեղինակի բոլոր աղբիւրները, միւսից, որ, գուցէ, աւելի էական խնդիր է, - Խորենացու երկի արժանահատութիւնը, իբրև պատմական յիշատակարանի: Այս խնդրի շնորհիւ լուծուած կ'լինի մեծաւ մասամբ: Կին Հայոց պատմութեան գիտական մշակումն »:

Թողնենք մի կողմ ցածկը և անցնենք բուն հետազոտութեան, որ ամփոփուած են 17 գլուխների մէջ: Ապա հետեւում են եզրակացութիւնները: Առաջին դիմի խորագիրն է «Արշակունեաց մասին», (էջ 1-16): Այստեղ ււանդում է Արշակունեաց երեւելի պատմական ասպարիդում, նոցա պատերազմները և աշխարհակալութիւնները մինչեւ մեր Մեծն Տիգրանը 94-55<sup>1</sup> և նորա որդի Արտաւազդն՝ ըստ Գուտշիդի (Geschichte Irans und seiner Nachbarländer von Alexander dem grossen bis zum Untergang der Arsakiden, Fulingen, 1888), Պողիբիոսի, XXVI, 6<sup>2</sup>, և Ստրաբոնի (հատ. Բ) XI, ԺԳ, 5 և 15, (հատ. Գ) XVI, Ա, 19:

Արտաւազդ զոհ է լինում Անտոնիոսի լարած որդագոթներին: Ապա Հոռոմի գերիշխանութեան ներքոյ Հայաստանում կառավարում են ութը թագաւորներ՝ մեծաւ մասամբ Տիգրանի ցեղից - մինչեւ 16 դարին Քրիստոսից յետոյ, երբ Առաջւար Ասիոյ տիրակալութեան համար մղած պատերազմներում Պարթեւացիք մի առ ժամանակ յաղթում են Հռոմէացեաց:

1. Պ. Գր. Խալաթեանցի մօտ - ԻԶ, 4. որ թիւրիմացութիւն է կամ տոկարական սխալ. ծան. Մ. Ե:
2. Ըստ Գարազաշեանի-Տիգրան 86-36. Մ. Ե:

Գործնից. պարզ է, ասում է Գր. Խալաթեանցը. որ Պարթև Արշակունի, հարստութիւնը, հակառակն Մ. Խորենացու. և նորա ազբիւրների — Սուս — Ազաթան. զեզօսի կամ Մարտիրոսի՝ աւանդելոյն, կարող էր. Հայաստանում. հաստատուել միայն՝ Տիգրանի և նորա սերնդից յետոյ, համարեա երկն. գարով ուշ, քան թէ ասուած է յիշեալ. հեղինակների մօտ: Այդ իրազու. թիւնը. տեղի ունեցած պիտի լինի կամ. 34 տարում Քրիստոսի և կամ 53 թ, երբ Հայաստանը յանձնաւ. ցաւ Արտաւան III Պահլաւի օրդի Արշակին (34 թ.) կամ երբ Հայոց թագաւոր նշանակվեցաւ (58 թ.) վա. դարը I. Պահլաւի օրդի Տրդատ I-ը (էջ 1-5): Ծառայ քան քննել Արշակունեաց հարստութեան պատմութիւ. նը ըստ Խորենացու, պ. Խալաթեանցը մէջ է բերում Խմբի աւետարան թարգմանութեամբ Խորենացու Երջ. Գրքի Ա. և Բ. գլուխները՝ ամբողջութեամբ (էջ 6-7): Հետեւեալ քսան տողերի մէջ արշուում են Արշակունեաց ծագման վերաբերեալ Խորենացու ազբիւր. ներն, որոնք են՝ Եւսերիտի ժամանակագրութիւնը, Աստուածաշունչ գիրքը, Անանունը, Անանիա Շիրակա. ցի, Պրօֆուրիտր կետաբացի գուցէ. և Ծանախապաւում նաք Գ. Լուսաւորչի: Հետեւում են քաղաածքներ Եւսերիտի ժամանակագրութիւնից, թուով ութը, յու. նարեն բնագրից (Syncellos) Մասն I. էջ 141, 158, 155, 91, 163: Մասն II. էջ 128, 130. Մասն I. էջ 166, որոնք համապատասխանում են Մ. վ. Աւգերեանի հրատարակութեան (վեմ. 1818 թ.) նետեւեալ է. ջերին. Ա. 232. մ. II. « Պարթևք ի մակերոնացաց պատմաբանցին . . և ի նոցանէ թագաւորեաց Արշակ. ուստի և Արշակունիք »: (Աւգերեանի առաջին մասում մենք չկարողացանք գտնել յիշեալ քաղաւածքը, գուցէ, վրիպեցաւ մեր ուշագրութիւնից: Բ — 324 — ի կա. րանայ՝ որ գառաջինն միտխումբ կալաւ. զմակերոնաց. ւոց՝ հարստութիւնն, մինչեւ ՅԱշէքսանդրոս՝ որ գա.

1. Պարագաշեանը նոյնն է անում. տնս քննական Պատ. Հայ. մասն առաջին. էջ 204-205. Թիֆլիս 1895 թ: Մ. Ե:

սրացոց աշխարհն վիանդեաց, համարին քան և շորք թագուարք: Գ - 329 - « Պիւսս ընկնուս զնա՝ սրբայ Թպիրացոց՝ քսաներորդ երրորդ Սաբիղլեայ սրբույ Թեաւայ. սրպէս թէ նմա իսկ էր անկ իշխանուս. Թիւն յես Փիլիպեայ ազգին՝ վասն Ողածպեայ մեր Աղէքսանդրի »: Գ - 344. Ե - 226 մ. II: Ե - 345. Զ - 349 և 350 և այլն: Աւելորդ է մի առ մի կրկնել շուր քաղաւածքները, որոնց անմիջապէս նոյն առթիւ հետեւում են երեք ուրիշը Անանուհից: (Տես գրքեր 8, 9, 11 էջերը): Ապացոյցներէց մինն, թէ խորհնացին ծանօթ էր Անանուհին, խորհրդածում է պրօֆեսորը, այն է, որ նա յիշում է Պարթեւաց ապստամբութեան մասին « յես վաթսուն<sup>1</sup> ամի մահուանն Աղէքսանդրի »: Բանն այն է, շարունակում է նա, որ Անտիոքս թէոսի 11-դ. (մետաստաներորդ) տարին, երբ ըստ Մովսիսի, ապստամբուեցաւ Արշակը, համապատասխանում է երրորդ տարուն 132-րորդ ողիմպիական կամ 1766-րորդ տարուն Աբրահամից, ըստ Եւսեբիոսի, ուր այդ տեղում, արգարիւ գրուած է « Պարթեւքի մահեղանացոց ապստամբեցին և զառաջինն թագաւորեաց Արշակ. ուստի և Արշակունիք »: (Chronicon, II. pp. 130-131 - Παρουσι τής Μακεδόνων αρχής ἀπὸστῆσιν καὶ πρῶτος βασιλεύει Ἀρσάκης, ἀφ' οὗ οὐ Πάρτων βασιλεὺς Ἀρσακίδαὶ ἐχρημάτισάν).

Իսկ Աղէքսանդրոսը մեռաւ, ըստ Եւսեբիոսի, առաջին տարին 144-րորդ Ողիմպիական կամ 1662 թ. Աբրահամից. ուրեմն Արշակ ապստամբուեցաւ ոչ թէ վաթսուն, այլ եօթանասուն տարի Աղէքսանդրոսի մահից յետոյ<sup>2</sup>: Այսպէս մեր պատմիչը կրկնում է նոյն անհշութիւնը, ինչ որ նորա աղբիւր Անանուհի մօտն է:

1. Անանուհը ասում է՝ « Ետապեցին Պարթեւք Մահեղանացոց ամս ԿԱ », որ մի տարով տարբեր է խորհնացոց: Մ. Ծ:

2. Գարգաշեանի մօտ (տես Մասն առաջին. էջ 221). կարգում ենք՝ գիտելի է, զի ի մէջ վաթսներորդ ամի մահուան Աղէքսանդրի, այն է 263 նախ քան զՔր., և ի մէջ մետաստաներորդ ամի թագաւորութեան Անտիոքայ թէոսի, այն է 250՝ իբր երեքասասն ամաց միջոց կայ » և այլն . . . Մ. Ծ:

Գարնեայ՝ Անանուհը՝ Եւսեբիոսի երկու Արշակուն-  
քին ընդունելով մեկ Արշակի անդ, առլին է նորան  
Թագաւորութիւն: Մ. Խորենացիին՝ նկատելով այդ ժա-  
մանակագրական անպատեհութիւնը, մեկ Արշակի անդ  
գնում է երեք Թագաւորներ, այն է Արշակ քաղին,  
Արտաշեսին և Արշակ մեծին և յատկացնում է նոցա  
130 տարի Թագաւորութիւն, ասում է պ. Խալա-  
թեանցը:

Ա՛յնուհետեւ գալիս են երկու քաղաւանքներ Առ-  
տուանձաշնչից. այն է՝ Մակարայեցուց առաջին գիրք,  
1-10 և VIII. գր. 1-20:

Այսանդից զարդ է, ասում է պ. Խալաթեանցը, որ  
Յուզայի Մակարայեցու մասին պատմուածը նայ գրաս-  
միւր (Խմւմ - Խորենացի) անցրել է Պարթեւացի Ար-  
շակի վրայ: Մնացեալ Խորհրդածութիւնները պրոֆես-  
սորը հիմնում է Duruy-ի Histoire des Romains և  
Գարագաշեանի - Քնն. Պատ. Հայոց Մ. I. էջ 231.  
վրայ ուր ի միջի այլոց բացատրում է, թէ « Արե-  
ւելք » ասելով Հայոց հեղինակները VII դարուց զկնի  
հասկանում էին « Պարթեւք »: (տես նաեւ Հ. Աւի-  
շանի - « Հայաստան »): Ի դեպ հերքում է Կառիերի  
կարծիքը, որ ասում էր, թէ Խորենացու հետեւեալ  
խօսքերը Պարթեւաց Թագաւորների մասին « Թագա-  
ւորը ազգաց ի բնն ելցեն », գործ են անուած Պարսից  
և Արարացոց հեղինակների հետեւողութեամբ, ապա  
ուրեմն, դա մի նոր ապացոյց է « Հայոց Պատմութեան »  
յետին ժամանակի գործ լինելոյն: V դարուց մինչեւ  
XI-դը Հայոց հեղինակներից ոչ մեկը այդպէս չէր  
գրում Պարթեւաց Թագաւորների մասին: Պ. Խալա-  
թեանցը, գալով երկրի երեք մասն բաժանելոյն (այս-  
ինքն Եւրոպիէ, Լիբիէ և Ասիայ) հերքում է նաեւ  
Բաուզարանների կարծիքը, որ ասում էր, թէ սոյն  
զեկչքում Խորենացու վրայ ազգած է թէւնը: Խորե-  
նացին, կրկնում է նայ պրոֆեսսորը, օգտուել է իւր  
սիրած աղբիւրներից՝ Եւսեբիոսից, Յովսէփ Փլ. Փի-  
լոսից և ուրիշներից, չէ թէ Ափրիկանոսից, Պլատո-  
նից և Թեոնից: Գլ. II. Վաղարշակի և Արշակ I-նի  
մասին (էջ 17-35): Մեծաամն ասոյ յառաջաբանից  
յետոյ Պ. Խալաթեանցը մէջ է բերում ամբողջութեամբ

(Խախի Թարգմանութեամբ) Խորենացու II. գր. երբորդ գլուխը, I. գր. VIII, գլուխը. և բնասմբ IX-դի վերջը: II. գր. գլ. IV, V - մասամբ, VI, VII. մասամբ, VIII - մասամբ, և IX: (Եջ 17-21): Գոցանից առաջին գրքի VIII գլուխը, և երկրորդի. - III և V գլուխները ընդարձակուան են Անանունի կարն պատմութեամբ Փոքր Արշակի, սրբույ Մեծին Արշակի մասին, որ հօրից կարգուած էր Հայաստանի վրայ. և նա իւր կողմից իւր եղբոր Վաղարշակին կարգում է Թագաւոր Հայոց վրայ:

Այստեղ հետեւում են Անանունից երեք քաղուածքներ Պրոֆ. Պ. Պատկանեանի առսերեն Թարգմանութեամբ: (Եջ 22-23): Խորենացին, ըստ պ. Խալաթեանցի, աննելով Անանունից պատմութեան կմախքը, զարգարում է այն մանրամասնութեաներով. նա առաջ է քաշում Վաղարշակին, իբրև Հայոց Արշակունեաց հիմնադրին և մի կողմ է թողնում Փոքր Արշակին, որին յատկապէս տալիս է այդ պատիւը Անանունը: Պրոկոպիոսը հատարտում է Անանունի վկայութիւնը, յենով մի « Հայոց պատմութեան վրայ »: Հետեւում է 12 տողից բազկացած մի քաղուածք Պրոկոպիոսից<sup>1</sup> (De Aedif, III, 1): Բայց թէ ինչ « Հայոց Պատմութեան » վրայ է ակնարկում Անարագի պատմիչը, դժուար է ասել: Ոմանք կարծում են, թէ դա Փիլիզանդի մեզ շնասած երեք զպրութիւններն են, կամ յայտնի չորս զպրութիւնները, ուստի բառացի կրկնում է Պրոկոպիոսը մի քանի պատմական դէպքեր: Յայտնի է նոյնպէս, որ Ղ. Փարպեցին Բիլզանդի պատմական երկը նոյնպէս անդւանում է Հայոց Պատմութիւն: Յամենայն դէպս մեզ հետաքրքրող պատմութիւնը Առաջին Արշակի մասին չկայ Փաւստոսի մօտ, եթէ չհամարենք Պապի արդի Արշակին, որի օրերում 384 թ. Հայաստանը՝ բաժանվեցաւ Յունաց և Պարսից մէջ: Բացի դորանից, Պրոկոպիոսը և նորա աղբիւրը սխալ-

1. Ափսոս պ. Խալաթեանցը չէ տալիս յունարեն քաղուածքի առսերեն Թարգմանութիւն ընթերցողներին թեթեւութեան համար: Մ. Ե:

ուում են, կարծելով թէ Հայոց Արշակունեաց հարստութիւնը տեւեց 500 տարի. այդ ժամանակաշրջանը պէտք է գոնէ կիսել: 25 և 26 էջերում պ. խալաթեանցը խօսում է Նիսուէի մասին. ապա ասում է, թէ խորենացին 3, 4, 5 գլուխները կազմել է՝ ոգտուելով Անանուհից, որից այս առթիւ մէջ է բերում երկու նոր քաղուածքներ:

Գարձեալ՝ Բագարատի և Բագրատունեաց մասին տեղեկութիւնները խորենացին քաղում է Անանուհից: Էջ 28 պ. խալաթեանցը իրաւացի նկատում է. «սարսօրինակ է տեսնել խորենացու մտ, որ այն երկիրները, որոց առաջ տիրել էր Մեծն Արշակը և վեհանձնութեամբ տուել իւր եղբայր Ալաղարշակին, այսինքն Փոխգիւ, Կապադոկիա, Պոնտոս, Վաղիկա, վերջինս նորից պիտի նուաճէր<sup>1</sup>: Էլ չենք ասում, որ գծուար է ենթադրել Պարթեւաց կողմից որ և իցէ նուաճուածն քոքր Ասիայում այդ ժամանակ, որի մասին ոչինչ չեն յիշում դասական հեղինակները, ինքեանք Հոովմայեցիք եւս, որոնց հսկանա որութեան ներքոյ էին քօքր Ասիայի տերութիւնները 189 տարուց զկնի, անպատիժ չէին թուլ տալ այդպիսի բաներ<sup>2</sup>: Վերջապէս

1. Գարազաշեանը գրում է՝ զարմանալի է արդարեւ, զի խորենացին, յետ ասելոյ թէ Արշակ տիրեց «երրօրգ մասին աշխարհիս», այն է բոլոր Ասիայ տակաւին կանդուն կենթադրե Փոքուն Ասիայ տերութիւնները և զՄակեդոնացիս, այսինքն Ասորոց կամ Սելեւկեանց տերութիւնը. քանզի ասէ թէ «Պոնտոս, Մածաք ոչ գիտեին զամ պատերազմին Արշակայ ... նորէն նոյն Վաղարշակայ կու տայ ... նուաճել Փոքուն Ասիայ տերութիւնները ծանր պատերազմաւ (տես քն. Պատ. Հայ. մասն Ա. էջ 236-7. ծան.)»: Մ. Ե:

2. Պատերազմ Փոքուն Ասիայ տերութեանց դէմ է նուաճուած յառաջ քան զՄիհրդատ մեծ՝ յիշուած չէ ուրեք ի ժամանակակից պատմութեան, և ոչ Հոովայեցիք լուռ կը. կենսային որ և իցէ յարձակման դէմ ի վերայ թագաւորութեանց Փոքուն Ասիայ, որոց չէզոքութիւնն կարեւոր էր յապահովութիւն նոր ստացուածոց նոցա ի Միջերկրականին և յԱսիա: Գարազաշեան. մասն Ա. էջ 237-238: Մ. Ե:

ն՞՞վ է այդ անշույտ Մորփիւզիկէս<sup>1</sup>, որ շորս յիշեալ երկիրներէ զօրքի դուռն անցած պատերազմ է ելնում Վազարշակի դէմ: Շատ ուսումնականներ գլուխ էին կտարում այս անունը բացատրելու համար (Gutschmidt, Kleine Schriften, S. 319), Blau, Numism. Zeit., 1877, Marquart: Ռմանք կամենում են նոյնացնել նորան ծոփաց Միհրարզան թագաւորի կետ, որին յիշում է Գիողորոս Սիկեզացին: Պատերազմը Մորփիւզիկէսի հետ Խորենացուն Անանունն է ներշնչել, յիշելով Միջագետքում հաւաքուած հեկաներին Արշակի դէմ (?): Հետաքրքիր է նկատել, շարունակում է պիտալթեանցը, որ Վազարշակին պատերազմի ժամանակ շրջապատում են, բացի Բազրատունեաց, այն նախորարական ցեղերը, որոնք շատ մօտ էին Բազրատունի իշխաններին և թագաւորներին VIII-IX դարերում, այն է՝ իշխան գեղարքունի, իշխանք « Ի Քանանացաց, այսինքն գնթունի, ծնունդք Շարայի և Գունշարայ – այսինքն իշխանք Շիրակայ և Գուզարաց և ազգականք Բազրատունեաց – « Սիսական և Կազման » – այսինքն Սիւնեաց և Գարգմանաց: Այստեղ մեք ունինք նոր օրինակ յիշատակութիւն Բազրատունեաց ազգի յետին յարաբերութեանց՝ վերագրուած Արշակունեաց հարստութեան հիմնադրին:

Գալով « Կողմնիս » ամրոցին, կարելի է նկատել, որ Խորենացին դարս մասին խօսում է Պրոկոպիոսի դարձուածներով<sup>2</sup>:

« Հինգերորդ գլուխը, ասում է պ. պրոֆեսորը, ամբողջութեամբ պատկանում է Խորենացու գրչին և կարող է ծառայել իբրև կազապար նորս հարտասանական ոճի »:

1. Գարագաշեանն եւս նայն հարցն է գնում, ո՞վ էր այն Մորփիւզիկէս. ամանք զՄորփիւզիկէս համարին լինել Միհրարզան, յիշեալն ի Գիողորոսէ Սիկեզացուց իբրև թագաւոր Ծոփաց. (տես էջ 238): Մ. Ծ:

2. Վազարշակի պատերազմի նախ մանրամասնութիւնների վրայ ուշադրութիւն է դարձրել նաև Գարագաշեանը. տես էջ 206, մ. Ա. Մ. Ծ:

3. Այս և հետագայ գլուխները ներքում են արդէն Գարագաշեանէ, իբրև ոչ պատմականք: Մ. Ծ:



Խորենացին օգտուել է նաև Հայոց Արշակունեաց ցարսպակից, որ բերուած է Անանունի մօտ, փոփոխելով այն ըստ իւր քմաց. այդ ցարսպակից (24-ից 21) նա արտաքսել է Արտաունից և Արշաւրին, բայց իւր կողմից մտցրել է Արգարու որդի՝ Անանունին. բացի դարանից Երուանդին աեղափոխել է առաջին դարն Քրիստոսոսի:

Անանին ուշագրութեան արժանի է վեցերորդ զըլուելը, որ հեղինակը (Խորենացին) հաղորդում է բուհարաց զազթահանութեան մասին Հայաստանում երկրորդ դարում նախ քան զՔրիստոսոս: Բուհարաց մասին առաջին անգամ յիշում է V դարու վերջում Եննսդոս եպիսկոպոսի մօտ իւր թափառական ցեղերի Դանուբ դեպի արեւելք: Դոքս բազմաթիւ թիւրք յեղեր էին, որ սարում էին (Ռուսիոյ) Վօլգա գետի միջին հոսանքով (Թեոփանեոսյ η πάλλαιά βουλγαρία ή Μεγάλη): 502 թ. նոցա՝ Կրստաֆեերը երեւեցան մինչև անգամ Կ. Պօլսոյ մօտ. 538 թ. նոքա մեծ պարսութիւն կրեցին Յոններէց և գերիներին Յուստինիանոս կայսրը զազթեցրեց Լազիկայում և Հայաստանում (Lebeau, hist. du Bas-Empire, տ. VIII. p. 415). 680 թ. Բուհարը բուհարիայում հզօր թագաւորութիւն կանգնեցին: Դրան Բուհարաց մասին յիշում է և Անանիոս Երուանդին իւր Աշխարհագրութեան մէջ, ուստի քաշած պիտի լինի և Խորենացին:

VII և VIII դարերու մասին պ. Խալաթեանցը չէ խօսում, վասն զի գոքա արդէն հետադարձուած են Գարազաշեանէ, IX դիւրում Արշակի և Բագրատունեաց մասին զբոլոր ոչինչ պատմական նշանակութիւն չունի:

Գլուել Գ. Արտաշէս Ա. էջ 36-55.

Այս գլուելը սկսվում է տասն տող յառաջաբանով կամ նկատուցութեամբ, որին անմիջապէս հետեւում են Մ. Էմբիի թարգմանութեամբ՝ Խորենացու Բ զբրիւյս գլուելները՝ Ժ, ԺԱ, ԺԲ, ԺԳ. (էջ 36-40 մէջ բերուած):

Սպասելով Մար-Աբասը, գրում է այ. խալիթեանցը, խորենացին Արտաշէս Առաջինի պատմութեան համար մինչև Աբգարը գիտում է Ափրիկանոսի Ե-դ գրքին: Վերջինս գրել է մի ժամանակագրութիւն հինգ գրքը, սկսեալ աշխարհիս տեղեւորութիւնից մինչև երբորք տարին Հեղիոզարաղի (221 թ). բայց զա ամբողջութեամբ մեր ձեռքը չէ հասած. նորանից ձեացել են միայն քանի մի քաղուածքներ Եւսեբիոսի և միւս ժամանակագրիներէ մաս մինչև Միքայէլ Ասորին (ԺԳ-դ), որ, ի միջի այլ աղբիւրների, օգտուել է նաև, ինչպէս այժմ յայտնի է, և Մար Աբասից (կառիւր. Հանդ. Ամս. Յուն. 1897 թ):

Այստեղ նախ և յառաջ պէտք է նկատել, որ, հակառակ խորենացուն, Ափրիկանոսի մասին չէր կարող վկայել Յովսէփ Փլաւիոսը, որ նորանից 200 տարի առաջ էր ապրում: Բացի Ափրիկանոսից՝ խորենացին սկնարկում է նաև Հիւպոդիոսի վրայ: Եթէ զա յայտնի հռովմայեցի եպիսկոպոսն է (+ 235-236 թ), նա, արգարեւ, Ափրիկանոսի ժամանակակիցն է. և կարող էր օգտուել նորա ժամանակագրութիւնից. սակայն զորան վերադրեալ երկատիրութիւնների մէջ ակնարկներ չկան ոչ Հայոց, ոչ էլ Արտաշիսի մասին: Նշյն բանի մասին չկայ ոչինչ նաև իմ նոր գառն Հիւպոդիոսի մի ժամանակագրական երկի հայերէն թարգմանութեան մէջ: Կասկածելի է թւում և մի այլ վկայութիւն, որ խորենացին վերագրում է Եւսեբիոսին (եկեղ. պատ. Ա, 13), իբրև թէ Ափրիկանոսը իւր Քրոնիկանի Ե գրքում աւանդում էր, քաղելով Եդեսիայ գիւանից, Հայոց առաջին թագաւորների գործոց մասին մինչև Աբգար և Աբգարից յետոյ մինչև Երուանդ<sup>1</sup>. (sic!):

1. Վերոյիշեալ երեք Պարագայից աւթիւ Գարս-գաշեանը ասում է՝ ա. « Ափրիկանոս գրեց ՍԱՂԱՄԱՅ մինչև ց՛հեղիոզարաղոս, այսինքն մինչև 217, համառօտ ժամանակագրութիւն մը, որոյ հատակոտորը միայն կան առ Եւսեբեայ և առ այլս ոճման ի հարց եկեղեցւոյ »: ... Բ. « Ինչպէս կրնայ վկայել Յովսէպոս Ափրիկանոսի, որ իբր երկերիւր ամօք յետոյ » (Ա-

Ամուսնուեալ իաշաթեանցը սուսգում է երեք գեղ-  
քեր, երբ Եւսերիտը ամուսնուեալ է Ափրիկանոսի զրոյ  
և միանգամ միայն Եւսերիտը Ափրիկանոսի կողմից  
սուսում է « Edessae regnavit Abgarus vir probus  
ut Africanus refert »: Վերջապէս Եւսերիտի Եղե-  
սիս գիւղին մասին՝ ասածներէ մէջ չկայ այն, ինչ որ  
վերագրում է նորան հայ պատմագիրը: Բացի գորանից  
Խորենացին ոչ միայն Արգարին և նորա նախորդներին  
հայ է զարմնում, հետեւելով անյայտ ազբուրին, այլ  
և մոցնում է պրտեղ մի նոր անուն — Երուանդ, որ  
կասկածի տեղիք տալով, մասնում է հեղինակին գաղ-  
տնի նպատակը: Գլխապէս միջանկեալ բաներ է բե-  
րում Խորենացին 36 գլխում, քաղելով Ղերուանայից,  
Արգարի ժամանակի պատմչից և իւր կողմից աւելաց-  
նելով Հայոց թագաւոր Սանատրուկի անունը, որ չկայ  
ոչ Ղերուանայի ասորական ընկալքում, ոչ էլ գորա  
կայերէն թարգմանութեան մէջ<sup>1</sup>:

Վրիկանոս) քան զնա »: Գ. Եւսերիտի « հին կայերէն  
թարգմանութիւնը ունի այսպէս. « ի քարտեա որ  
կային անդ (Սիգեսիա), եր գրեալ — ամենայն ինչ որ  
մի անգամ գործեցաւ յառաջից անախ մինչեւ ՅԱԲ.  
գար »: Խորենացին ... կը կարծէ, թէ Եւսերիտս բու-  
լոր հայ թագաւորաց գործերուն համար առե ... մինչ  
բանք Եւսերիտայ են զվազեմի պատմութենէ քաղաքին  
Եղեսիս և զգործոց Արգարու Յիսիս: Մ. Ծ:

1. Ի պաշտպանութիւն Մ. Խորենացու պէտք է նկա-  
տել: որ Արգարը արգարեւ Հայոց թագաւոր էր, ինչ-  
պէս սուսգում է Մար-Աբասի նորագիւտ արաբական  
քաղուածքից. որի Ֆրանսիական թարգմանութեան մէջ  
կարգում ենք հետեւեալն. Les Arméniens, lorsqu'ils  
eurent vu que les Perses ..., se donnèrent un  
roi pour la seconde fois et le nommèrent Abgar;  
il était courageux, fort, éprouvé à la guerre և  
այլն, ան Journal Asiatique, N.º 3 — Mai-Juin  
1903, էջ 534: Երկրորդ քաղուածք « Abgar régnait  
à Er-Roha (Սուհա) sur les Arméniens. Il écri-  
vit une lettre au Christ pour qu'ils vînt auprès

Եղեակոյ գիւանի վրայ պ. Խաչաթեանցը կանգ չէ առնում, քանի որ դա էլ Նիթուէի նման կասկածելի է. բայց Խորենացուն անպատեհա դպրաւ կարգաւ որ են, ինչպէս և մեկնակամ մատենաք. ոչ թէ նոցանից որ և իցէ քաղուածքներ անելու կամար, այլ իւր մասցածին պատմուածքները սքողելու կամար: Պ. Խաչաթեանցը, հետեւելով Գուտշիգին, Գարագաշեանին և Գեւլցերին, Եսկառակ Բաուճգարանների, կարծում է, թէ Խորենացին չէր ճանաչում անմիջապէս Ափրիկանոսին: Վերջապէս եթէ Արտաշեսի և ուրիշ Թագաւորների դարձոց մասին Խորենացին գիտէր Ափրիկանոսից և Հիւպարիատից, ինչն նոցանից քաղուածքներ չէ բերում, այլ գիտնում է սակաւալայտ Պալիկրասեանին, Իւագարոսին, Կամադրոսին և Փղեզանթոսին, որոնք այդքան կուպիս կերպով ազաւազել են Հերոդոտի յայտնի պատմութիւնը Կիւրոսի և Արիւսոսի մասին: Հետեւում են Գուտշիգի կարծիքը այս նեղինակների մասին: Բայց ինչն է առիթ տուել Խորենացուն Հայոց աշխարհակալութիւնները փոքր Ատիպում և Եււագայում կուպել Արտաշեսի անուան հետ: Պատասխան Անանիա Շիրակացու Աշխարհադրութիւնը, ուր Եււագայի նկարագրութեան մեջ յիշուած է 44 կղզիների թւում Ատալանա կղզեակը . . . ւասում են, այնտեղ մեռել է Արտաշես Թագաւորը: Այդ կեղտուք և մութ աւանդութիւնը Հայոց մի Արտաշես Թագաւորի մասին չէ գուցենում է Խորենացուն և նա միայն է. յիշանում

de lui et le guérit. Le Christ répondit qu'il lui fallait faire son devoir sur la terre des Juifs, parce qu'ils sont ses enfants. L'envoyé d'Abgar était peintre; il prit le portrait de Christ; après son crucifiement, Thaddée, l'un des 72 (disciples), vint (à Édesse) et guérit Abgar. (տե՛ս նոյն J. As. էջ 540): Դա է Խորենացու Բ գրքի 31, 32 և 33 գլուխների ազբուրը: Ուրեմն, մեր ծերունի պատմագիրը այնքան էլ ստախոս չէ, որքան հռչակում են նորան իրաւքնագրատները: Մ. Շ:

1. Ցե՛ս նաեւ Գարագաշեան. էջ 263. մ. Ա:

մշակել այն, այսինքն բնորոշել այս թազաւորի անձնաւորութիւնը, նորա ժամանակը, աշխարհակալութիւնները, օգտուելով Յով. Փլաբիոսի հետեւեալ խօսքերից: « Գտերքէսի մահից յետոյ, (Պարսից) թազաւորութիւնը անցաւ նորա որդու կիւրոսին, որին Յոյնք կոչում են Արտաքսերքսէս (Արտաշէս) » (Ճ. I. ԺԱ, 6, 1): Գորանից յետոյ Պ. Խալաթեանցը որոշում է Խորենացու բուն ազբիւրները, որոնք են՝ Փաւստոս Բիւզանդ, կղեմէս Աղէքսանդրացի, Ազաթանգեղոս, Ա. Շիրակացի, Եւազարոս (Աղէքսանդրի և Գարեհի պատերազմի նկարագիրը), գուցէ Գրիգոր Նիւսացի, Մալալայի ժամանակագրութիւնը, Աստուածաշնչի - Սիրաբայ գիրքը, գուցէ Մակարայեցւոց Բ. գր., Եպիփանոս: Ապա խօսուում է Հիւպոլիտի հայերէն բնագրի մասին, որ պ. Խալաթեանցը գտել է վենետիկ Միթթարեանց մատենադարանում, որի խորագիրն է, ըստ վենետիկանի, « Մովսիսի Խորենացւոյ և Անդրէասայ, և ըստ էջմիածնականի - Մ. Խորենացւոյ, Անդրէասայ և Անանիայ Շիրակացւոյ: Նկարագրելով այդ գրքը՝ շագիւրները յարգելի պրօֆեսորը երկրորդ անգամ խոստանում է լոյս ածել այն ի գիտութիւն բանասիրաց:

## Գ Լ Ո Ւ Խ Դ

Տիգրան Բ և Արտաշատ Ա

(էջ 56-68):

Արտաշիսի որդի Տիգրան, որ իրօք մեծ աշխարհակալ էր և որի շնորհիւ Հայաստանը դարձաւ հզօրագոյն պետութիւն, Խորենացի պատմութեան մէջ (գլ. 14-22) շատ համեատ դեր է կատարում. (Աղբիւրն է Յ. Փլաբիոս): Հետեւում են քաղուածքներ Խորենացու Բ. գրքի հետեւեալ գլուխների՝ ԺԳ, ԺԵ, ԺԶ, ԺԷ, ԺԸ, ԺԹ, Ի, ԻԱ, ԻԲ, ԻԳ (էջ 56-61): Տիգրանի առաջին գործը լինում է մեհեաններ շինել և նոցա մէջ կանգնել հօր բերած շաստուածների պատկերները, որոնք

նոյն են, ինչ որ Ազաթանդեղոսի մօտն են. ապա ուրեմն ազրիւքն այս հեղինակն է: Տեսութիւն Տիգրանի գործունէութեան: Արեւմտեան պատմաբանները, ինչպէս յայտնի է, շատ հետաքրքիր տեղեկութիւններ են հաղորդում Տիգրանի անձնաւորութեան, նորա կնոջ կղէտպատրայի, Պոնոսի թագաւորի, Միհրդատի դրատեր, նոցա որդւոց և մանաւանդ թշուառ արքայորդի Փոքր Տիգրանի մասին, որ հօր վասնդաւոր մրցակիցն էր, թագաւորի եղբօր Գուրասի և այլոց մասին (Th. Reinach, Mithridate Eupator, Paris, 1890): Աւելի նմանը չկայ Մ. Խորենացու մօտ, բացի այն տեղեկութիւնից, թէ ոչ թէ Տիգրանն էր փեսայ Միհրդատի, այլ ընդհակառակն, վերջինս ամուսնացած էր աւաջի ջրոջ հետ: Միհրդատի մահը Փառնակի որդու ձեռքիցն է, ինչպէս ականդում է Յովսէպոսը; ոչ թէ Պոնոսացի Պիղատոսի հօրից, ըստ Խորենացու: Պատահի Միհրդատի մասին պատմուածը յերիւրուած Պերզում Միհրդատի ականդութիւններից եւս և կապազովկիեաց Աղբեղայոսի, որ ներոգելով կապազովկիոց մայրաքաղաք Մածակը, կոչեց այն կեսարիսի պատիւ Տիգրիոս կայսեր. այն ինչ այդ իրողութիւնը մեր պատմիչը վերագրում է պատանի Միհրդատին: Կոյնը կարելի է նկատել Հրէից գշտոյ Աղեքսանդրիայի, Աղեքսանդրի կնոջ մասին, որի խնդիրքով Տիգրանը ազատեց Պտղոմայիդը պաշարուածից: Կորան Խորենացին, յայտնի չէ ինչո՞ւ անուանում է Մեսաղինայ, շփոթելով Հրէից մի այլ թագուհի Աղեքսանդրայի՝ Արիստաբուլոսի կնոջ հետ, որին Հրէայք, ըստ վկայութեան Յովսէպոսի, կոչում էին Սաղոմէ:

Դարձեալ՝ Տիգրանի պատերազմների պատմութեան միջոցին, Խորենացու ականդութեամբ, մենք տեսնում ենք մի շարք Հուովմայեցւոց զօրավարներ, ուղարկուած Արեւելք՝ Պոնոսի, Հայաստանի, Պարթևաց գեմ կռուելու և Ասորոց ու Հրէից զործերը կարգի բերելու համար (գլ. 15, 16, 17): Դրքա բոլորը շիշում են Յովսէպոսի մօտ, բայց այլ գրութեան և պատմանների մէջ, քան հայ պատմչի մօտին: Այսպէս, Գաբիանոս և Սկաւրոս Պոմպիոսից (որ այն ժամանակ զբաղւած էր Տիգրանի գեմ պատերազմներով) ուղար-

կուած գումով Հրէից գործերը կարգաւորելու, կաշառուած մեծքանակ գումարներով, երկու մրցակից եղբարց՝ Հիւրկանոսի և Արիստարուզոսի պայքարում, բռնեցին կրասերի կողմը: Բայց Խորենացին Գաբիանոսի կաշառակերութիւնը կապում է Տիգրանի հետ. և՛ « գաղանի հաշտութիւն խօսեցեալ ընդ Տիգրանայ, տայ զքեռորդին նորա զպատանին Միհրդատ », թէեւ Գաբիանոսը արձակել էր զերութիւնից Պարսից թագաւոր Արդի եղբոր՝ Միհրդատին:

Յայտնի է նաեւ, որ մտաւորապէս 40 տարի նախ քան զԳրիստոս Անտոնիոս զօրք ուղարկեց Արեւելք առաջնորդութեամբ Բենդիդիոսի Բասսոսի, որին յանձնուած էր Ասիոյ և Ասորոց սպարապետութիւնը: Այդ միջոցին Ասորոց և Փոքր Ասիոյ մեծագոյն մասանց տիրում էին Պարթեւք և հասարակագետական կայսրն Ղաբիանոս, որ իբր փախստական ապրելով Պարսից թագաւոր գրանը, Պարթեւաց հետ գործում էր Հուլիոսի դէմ: Բենդիդիոսը ոչ միայն հալածեց Ղաբիանոսին Փոքր Ասիոյից բռնեց և սպանեց. այլ և Ասորիքում շարաշար յաղթեց Պարթեւաց, որոնք օգնութեան էին եկել իւրեանց գաշնակցին և արտաքսեց Եփրատի միւս կողմը: Դորս մասին յիշում է նաեւ Յովսէպոսը (տես և Mommsen, Röm. Gesch III. Kap. 4): Խորենացին վերլոյշեալ պարագաների մասին ոչինչ չէ ասում, միայն հարեւանցի յիշում է՝ « որոյ (Բենդիդեայ) հասեալ յԱսորիս, փախստական առնէ զզօրս Հայոց »:

Բաց ի գորանից հայ պատմչի մօտ կան ակներև առաքանիքներ. օր. Կրաստոս, Անտոնիոս, Բենդիդիոս, Սովսիոս զալիս են Արեւելք Տիգրանի կենդանութեան ժամանակ, որ միանգամայն անհնարին է: Հայոց թագաւորը մեռաւ ոչ ուշ քան 55 թ. վասն զի հետեւեալ 54 տարին, երբ Կրաստոսը պարտութիւն կրեց, Հայաստանում, Պլուտարքոսի վկայութեամբ, արդէն թագաւորում էր նորա որդի Արտաւազգը<sup>1</sup>. Անտոնիոս, Բենդիդիոս և Սովսիոս առաջին անգամ եկան Արեւելք Կրաստոսի պարտութիւնից տասն տարի յետոյ,

1. Mommsen, III. kap. 9.

ուրեմն, ոչինչ յարաբերութիւն չէին կարող ունենալ Տիգրանի հետ: Միւս կողմից բոլոր հռովմայեցոց զօրավարներից, որոնք արդարեւ Տիգրանի ժամանակակիցներն էին և զորժ ունէին նորա հետ, խորենացին յիշում է միայն Պոմպիոսին, այն էլ հարեւանցի. իսկ Սուլլայի և մանաւանդ Լուկուլլոսի մասին բոլորովին լռում է: Բացի գորանից Յովսէպոսի Լուկուլլոսին, որի յարձակումն Հայաստանի վրայ հարկադրում է վերագառնալ հայրենի Տիգրանին, խորենացին փոխարինում է Վայկունն աւազակով, որ իբր թէ « խռով է գերկերն Հայոց »: Պարզ է, որ հայ պատմիչը խորշում է Լուկուլլոսին յիշելուց: Պոմպիոսի և Տիգրանի յարաբերութեանց վերաբերեալ տեղեկութիւններն եւս խառն ի խռոն են: Հռովմայեցոց զօրավարը, հակառակ ժամանակակից պատմիչների հիշդ աւանդութեանց, ոչ միանգամ չէ հանդիպում Հայոց թագաւորին և խորենացին աշխատում է հեռացնել նորան Արեւելքից՝ անմիջապէս Միհրդատի մահից յետոյ: Բարդափրանի և Հրէից քահանայապետ Հիւրկանոսի գերութեան պատմութիւնքը խորենացին քաղել է Յովսէպոսից և վերագրել Տիգրանի ժամանակին, վասն զի այդ մասին մի աւանդութիւն կայ Փ. Բիւզանդի Պատմութեան էջերում. այն ինչ Մեծն Տիգրանը գորանից 15 տարի առաջ արդէն մեռած էր:

Արտաւազդին խորենացին նկարագրում է անհամակրելի գծերով. « զիմաստութենէ և զքաջութենէ անփոյթ արարեալ, ուտելեաց և ըմպելեաց պարփպեալ » և այլ խօսքերով մեր պատմիչը, կարծես, գուշակում է պատանի թագաւորի ապագայ պարտութիւնը և աւժօթալի գերութիւնը: Բայց այս իշխանը միանգամայն հակապատկերն էր այն անիմաստասէր Հայոց թագաւորների տիպարի, որոնց առթիւ գանգատում է մեր հեղինակը իւր Պատմութեան առաջին գրքի երրորդ գլխում: Պլուտարքոսի վկայութեամբ, Արտաւազդը ստացել է գեղեցիկ այն ժամանակի համար յունական կրթութիւն և մինչեւ անգամ գիտէր գրիչ շարժել, թողնելով մի շարք գրուածքներ յունարէն լեզուաւ բանաստեղծութեան զանազան տեսակից<sup>1</sup>: Ոչ պակաս

1. Պլուտարքոս, Crassus.



գերազանց էր հանդիսանում նաեւ իւր փառաւոր զինուորական յատկութիւններով, և միայն շնորհիւ Անտոնինոսի դաւաճանութեան, որ աշխատում էր Պարթեւաց դէմ մղած անյաջող արշաւանքի վրէժը թափել մէկի վրայ, — Հռովմայեցւոց հաւատարիմ գաշնակից Արտաւազը զերի գարձաւ Հռովմայեցւոց զօրավարի նորա յաղթանակը զարդարելու համար Եգիպտոս մըտնելու ժամանակ. Ակցիոսմի հակատամարտից յետոյ Կղէոպատրայի հրամանով գլխատուեցաւ<sup>1</sup>: Այսպէս էր այս թագաւորի վիճակը, որ Խորենացին գիտէր Յովսէպոսի մի քանի խօսքերից:

Անհիմն է նաեւ Կղէոպատրա թագուհու քէնը Արտաւազի վերաբերութեամբ:

## Գ Լ Ո Ւ Խ Ե .

Արշամ եւ Աբգար (էջ 69—86):

Վէց տող յառաջաբանից երեւում է, որ այս երկու « Հայոց » թագաւորներից առաջին մասին սակաւ պիտի խօսուի, իսկ նորա որդու Աբգարի մասին — մանրամասնօրէն: Այնուհետեւ Խորենացու Բ զբքից Մ. Էմինի թարգմանութեամբ մէջ են բերուած հետեւեալ գլուխները՝ ԻԴ, ԻԵ, ԻԶ, ԻԷ, ԻԸ, ԻԹ, Լ, ԼԳ և ԼԵ. (էջ 60—74):

Հարկ է նկատել, ասում է պրօֆ. Խալաթեանցը, որ ոչ միայն Արշամ թագաւորը առեղծուածական անձն է, այլ և նորա անունը ծագում է թիւրիմացութիւնից: Խորենացին, յայտնի բան է, ունէր իւր առաջեւ Հայոց թագաւորների պատրաստի ցուցակը, ուր Աբգարի հայրը կոչուում էր Արշամ: Եւ մեր պատմիչը, հետեւելով այդ ցուցակին, Աբգարի հօր նոյնպէս կոչում է

1. Mommsen, V. kap. 9.

Աբշամ, յարեւոյ իւր կողմից « որ և Աբշամ <sup>1</sup> »: Բանն այն է, որ Եւտերիոս Եկեղ. Պատմութեան մէջ Եղեւթիս թագաւորը, որ նամակագրութիւն ունէր Քրիստոսի հետ, անուանուած է Աբգար Ուհամայ. իսկ Ասորոց յիշատակարանում Երեսացոց դարձի մասին կամ « ի քարոզութեան Թադէոս առաքելոյ » - Աբգար Ուքամայ, որ նշանակում է « սեաւ »: Երկու գրուածոց հայերէն թարգմանութիւնները ասորերէնից. որ, հաւանական է կարծել, կատարուած են Ե-դ գաբում, սխալ ընթերցանութեան շնորհիւ արգեօք, թէ չկամենալով, որ ինքն թագաւորը Փրկչին գրած նամակում կոչէ իրան « սեաւ » բարտութեան պատճառով, աւանդում են այսպէս՝ « Աբգար Աբշամայ » (եկեղ. պատմ.) և « Աբգար Աբշամայ » (Եղես. դարձ: Թէ դա genitivi patronimici չէ՛, երեւում է այն իրողութիւնից, որ երկրորդ յիշատակարանը կոչում է Աբգարին որդի արքային Մասնու (Մանովայ): Բայց Հայոց թագաւորների ցուցակի յորինողը երկու դէպքումն էլ տեսնում էր սեռական հարմարներ, ոչ առանց ազգեցութեան յայն թարգմանութեանց, մանաւանդ Եւտերիոսի Քրոնիկոսի: (Gutschmidt, Untersuchen, über die Geschichte des Königreichs Osroene. էջ 10 և A. Carrière, La légende d'Abgar): Այս տեղից ահա գոյացաւ յատուկ անունս Աբշամ, հայր Աբգարի, իսկ Խորենացու մօտ - Արշամ և Աբշամ, որ Աբգարի մականունն է:

Խորենացուց չէր կարող խուսափել այն իրողութիւնը, թէ Երեսացոց Գարձի պատմութեան մէջ Աբգարը կոչում է Մասնուի որդի: Կամենալով հարթել այդ հակահասութիւնը, նա իւր կողմից յարում է՝ « զսա ոմանք յԱսորոց կոչեցին Մանովայ, ըստ յուլովից սովորութեան կրկին ունեւով անուանս ».. (գլ. ԻԴ.), որ բնաւ չէ ճշգրտում բուն Ասորոց պատմութիւնից: (Gutschmidt, l. c.)<sup>2</sup>:

1. Խորենացու ԻԴ գլ. կարդում ենք՝ թագաւորեցուցին ի վերայ ինքեանց զԱրգամ, որ և Արշամ:

Մ. Շ:

2. Բայց այժմ ճշգրտում է Մար Աբասի նորագիւտ

Արշամի առեղծուածական անուան մասին արտայայտած խորհրդածութիւններից յետոյ, պէտք է ասել, որ խորենացու աղբիւր Յովսէպոսը, ուստի նա քաղմութիւ քաղուածքներ է բերում, հշդութեամբ որոշում է Հայոց հէքն Արտաւազդ Թագաւորի ժառանգի անունը. դա նորա երէց որդի Արտաշիասն է, որին շուտով Հոովմայեցիք մերժեցին նորա ատելութեան համար զէպի Հոովմը, տեղը կարգելով նորա փոքր եղբոր Տիգրանին (Bel. Ind. 1. 21, II.)<sup>1</sup>: խորենացին չհետեւեց Յովսէպոսի ցուցումներին, որովհետեւ ձեռքի տակ ունէր Հայոց Թագաւորների այլ ցուցակը, ուր յիշուած էր և Արգարը և միտք ունէր հաշտեցնել այդ հակահառութիւնը իւր աղբիւրի, Արտաւազդի ժառանգ Արշամին կոչելով որդի Արտաշիսի, եղբոր Տիգրանի: Կոյն պատահաով մեր պատմիչը մի կողմ է թողնում Յովսէպոսի հետաքրքիր տեղեկութիւնները Հայոց ուրիշ երկու Թագաւոր Տիգրանների մասին, յորոց մէկն որդի էր Աղեքսանդրի, որդւոյ Հերովդեսի Մեծի, — կապազովկիոյ Թագաւոր Արքեղայոսի դստեր — Գլափիբից, միւսը նորա եղբոր որդին: (Հերովդեսի որդի Աղեքսանդրը ունէր երկու որդի՝ Աղեքսանդր և Տիգրան, որ ստացաւ Հայոց Թագաւորութիւնը. այս վերջինս որդին նոյնպէս Տիգրան էր, որին Կերոն կայրը կարգեց Հայաստանի Թագաւոր. And. Ind. XVIII, 5, 4). Դորանից յետոյ խորենացին յերիւրում է անհահ կերպով Հերովդեսի և Արշամի ընդհարումը օգտուելով Յովսէպոսից իւր տեսակէտից միայն: Այնուհետեւ պրօֆ. Խալաթեանցը աւանդում է Արգարի և արաբական հարստութեան պատմութիւնը, որի հիմնադիրն Ուռնայում, երկրորդ դարում նախ քան զՔրիստոս, էր Orhâi ben hewja (137 թ.) դորան հետեւում էին Թագաւորներ սեմիտական անուններով Մա-

արաբական քաղուածքից, կը նկատենք մեր կողմից:

Մ. Շ:

1. Յովսէպոսի քաղուածքի այս կտորը խորենացին սխալ է աւանդում, ինչպէս նկատել է A. Carrière-ը, l. c.

անու, Աբգար, որոնց թագաւորութիւնը տեւեց 352 տարի, 137-ից մինչեւ 216 թ. Քրիստոսի: Յիշեալ հարստութեան վերջին թագաւորն էր Մասնու թ, որդի Աբգար թ-դի: Բուն Աբգարի պատմութիւնը խորհնացին պատմում է ութը գլուխներում (26-33), աղբիւր ունեւոյ Եւսեբիոսից, Ղերուբնային և Յովսէպոսին, յորոց տեղեկութիւններ քաղելով, յարմարացնում է իւր ցանկացած անձանց, փոփոխում է իրողութիւնները, Հերովդեսին և Հրէից վերաբերեալն վերագրում է Աբգարին, միով բանիւ յօրինում է պատմութիւնը: Պրօֆեսորը խօսում է Ղերուբնայի գրուածքի մասին, որ լուսաբանել են հետեւեալ բանասէրները Cureton, Wright, Հ. Աւեշան, Փիւլիպս (Հ. Տաշեանի « Zur Abgar-Sage »), Տիբերոն, որը կարծում է, թէ Աբգարի աւանդութիւնը յօրինուած է երրորդ գարում Յիսուսի:

Գարձեալ պատրիարկոց արքայ Արեաթի և Հերովդէս չորրորդապետի մէջ խորհնացին խառնում է նաեւ մեր Աբգարին և Ադիաբենի թագաւոր իզատի գերը Պարթեւաց վերաբերութեամբ՝ խորհնացու մօտ նոյն Աբգարն է կատարում, երթալով յարեւելս և թագաւորեցուցանելով Պարսից զԱրտաշէս և այլն: Ըստ Յովսէպոսի բացի դորանից, յիշեալ իզատ թագաւորի մայրը Հեղինէն, Մոնտրազի պրին՝ ճանապարհորդում է ջէպի Երուսաղէմ և շատ բարեգործութիւններ է աշուտ այնտեղ. Աբգարի պրին Հեղինէ նոյն նպատակով գնում է Երուսաղէմ, ըստ խորհնացու: Աբգարի երկրորդ նամակը Տիբերիոս կայսեր, յետոյ Թիլթերն - Ներսէհին և Արտաշիսին, անվաւերական են: Աբգարի հայացումն խորհնացուն չէ պատկանում, ինչպէս կարծում է կառիերը. այս մասին աւանդութիւնը աւելի հին է (Մար-Աբաս ոչ յառաջ քան Է դարն Քրիստոսի):

## Գ Լ Ո Ւ Խ Զ .

Սանատրուկի Կ. (էջ 87-98):

Որտեղից է քաղել խորենացին տեղեկութիւնները Սանատրուկի մասին, քանի որ ոչինչ չկայ նորա վերաբերութեամբ Ղերուբնայի գրուածքում: Յառաջ քան այդ հարցին պատասխանելն պրոֆ. Խալատեանցը, ըստ իւր սովորութեան, ամբողջութեամբ մէջ է բերում խորենացու Բ դրքի, 34, 35, 36 գլուխները:

Սանատրուկի պատմութիւնը գրելու միջոցին խորենացին ունէր ձեռքի տակ երկու աղբիւրներ, յորոց մէկն յիշում է. իսկ միւսերի մասին. թէեւ կցկտուր, բայց նշանաւորների մասին՝ նա զգուշութեամբ լռում է: Առաջին աղբիւրը պէտք է համարել անվաւերական աւանդութիւնը թագէտու առաքելայ Սոփերը Հայկականքի Ը հատորում (Վենետիկ 1854 թ.) երեք խմբագրութեամբ. առաջինը - հնագոյնն է և ամենից ընդարձակը (1-59 էջ) երկրորդը յօրինուած է առաջինից, ոչ առանց խորենացու ազդեցութեան. այնտեղ Սանատրուկը կոչուած է քեռորդի Արզարի, իսկ սա - թագաւոր Հայոց և Ասորոց (էջ 59-76). երրորդը (էջ 77-83) համառոտագոյնը՝ բովանդակում է իւր մէջ, համաձայն առաջին խմբագրութեան, միայն Սանդուխտ օրիորդի (արքայադստեր) վկայաբանութիւնը: Յիշեալ երեքին հարկ է յարել մի կարճ աւանդութիւն « գիւս նշխարաց թագէտու առաքելայ և Սուրբ Կոյս Սանդուխտի » (էջ 87-97), որ, ըստ երեւութիւն, նոյնպէս հին պիտի լինի: Հետաքրքիր է նկատել, որ այս աւանդութեան մէջ խօսք անգամ չկայ Արզարի մասին, իսկ Սանատրուկ անուամբ կոչում են լսկ դաշտն ու բլուրը, ուր հանգչում են սուրբ Սանդուխտի նշխարքը. վերջինս միանգամ միայն կոչուած է « Կոյս թագաւորական զարմից », առանց յիշատակելու նորա հօր անունը<sup>1</sup>:

1. Այս տողերիս թարգմանելու միջոցին ձեռքիս տակ չունէի Սոփերը: Մ. Շ:

Առաջին խմբագրութիւնը ազատ է խորհնացու ազգեցութիւնից, որ երեւում է այն հանգամանքից, որ նորա մէջ յիշուած Արզարը, համաձայն Եւսեբիոսի և Ղերուբնայի, Միջագետաց թագաւոր է միայն և Հայոցը գեռ չէ. Տուբիայ իշխանը, որի տունը իջաւ թագէտս առաքեալը, հրեայ է Պաղեստինից, համաձայն Ղերուբնայի, բայց ոչ Բագրատունեաց ազգից. Սանատրուկը կոչուած է Հայաստանի թագաւոր, բայց ոչ ազգական Արզարի: Եղինպէս ոչինչ չէ յիշում նորա հաւատալոյն և ուրացութեան մասին. նա մնում է միշտ խոտորակ և անօրէն թագաւոր: Եւ խորհնացին օգտուած է առաջին խմբագրութիւնից:

Մեծ պատմիչի երկրորդ աղբիւրն է Փաւստոս Բուզանդացին, որ, ըստ երեւութին, ձեռքի տակ ունէր աւանդութեանս հնագոյն խմբագրութիւնը, ուր տակաւին յիշուած չէր արքայադուստր Սանդուխտը: Խորհնացին Փաւստոսից գիտէր թագէտս առաքելոյ քարոզութեան, նորա մահուան, առաքելասպան Սանատրկի մասին և այլն: Բացի դորանից՝ խորհնացին սխալ է հասկացել կամ դիտմամբ ազաւազել Փաւստոսի ընդգիրը (Պ, 1) և եզրակացրել է, թէ Սանատրուկը աւհամայ հաւատացել է, յետոյ ուրացել իւր հաւատը: Ահա այդ տեղն. « Ի քարոզութենէն թագէտսի Առաքելոյ և նորուն յելից և ի մարտիրոսութենէն մինչեւ ի կատարումն վարդապետութեանն Գրիգորի և իւրոյ հանգստեանն, և յառաքելասպան Սանատրկոյ Միկիւն յսկամայ ինագանդէն հաւատոց եւ ի նորուն հակգատեան արքային Տրդատայ . . . այն ամենայն ի մեռն այրոցն գրեցան »: Պրօֆ. Խաւաթեանցը այս սողերը ուսներէն թարգմանելով, բացատրում է, թէ, « մինչեւ յակամայ հնազանդելն հաւատոց » բառերը վերաբերում են Տրդատին և ոչ թէ Սանատրուկին. ուստի Փաւստոսի Ֆրանսերէն թարգմանիչն (իմա Մ. Էմին) և Գարազաշեանը սխալ են հասկացել յիշեալ դարձուածը: Խորհնացին օգտուել է նաեւ Ղերուբնայից, ուստի մի քաղուածք է բերում պ. պրօֆ. իւր թարգմանութեամբ ուսներէն՝ Ադգէի մահուան մասին Արզարի սրգու ձեռքից: Հեղինէի մասին խօսելիս՝ մեր պատմիչը Եւսեբիոսին է ունեցել աչքի առաջ: Ահա այն մասեանս.

գրական նիւթերն, որոնց վրայից յորինել և խորհնացին Սանատրուկի պատմութիւնը, իւր կողմից յարելով տասն և մէկ յաւելումներ, ըստ կարծեաց պրօֆ. Խալաթեանցի:

ա. — Արզարից յետոյ Հայոց Թագաւորութիւնը բաժանուում է յերկուս. Անանունը Եդեսիայում, Սանատրուկը բուն Հայաստանում են Թագաւորում: Անանունը որին խորհնացին Արզարի յաջորդ է կարգում, ասորական բնագրում և հայ Թարգմանութեան մէջ կոչուում է Մասնու:

բ. — Սանատրուկը Արզարի քեռորդի է դարձրած:

գ. — Սանատրուկը առաջ ընդունում է Թագեոսի քարոզութիւնը, ապա ուրանում հաւատը

դ. — Սանատրուկը զօրք է հաւաքում Արզարի որդւոց զեմ պատերազմելու բոլոր Թագաւորութեան տիրելու գիտաւորութեամբ: Գլխաւոր նպատակն իրագործուած է. Հայերը առաջին քրիստոնէոսյ ազգի պատիւն են վայելում, Եդեսիայ Թագաւորութիւնը այլ եւս աւելորդ էր, պէտք էր նորան միացնել Հայաստանին, Թէ և Եդեսիայ Թագաւորութիւնը (հակառակ խորհնացուն) յարատեւեց իւր գոյութիւնը մինչև Գ. դարու կէսը:

ե. — « Աստուածային ի՞նչ ակնարկութեամբ խնդրեցաւ զրեժ մահուան Ադգէի յորդույն Արզարու: Քանզի սիւն կհեայ ... զերծեալ յունոզացն, անկաւ ի վերայ նորա և խորտակեաց զոտսն », Թէեւ այդպիսի մահուան մասին չեն յիշում ոչ Ղերուբնան, ոչ էլ Ասորոց կամ Հայոց անվաւերական ւաւնդութիւնները:

զ. — Սանատրուկը առաջ ընդունում է Եդեսիայ բնակիչներէ պայմանը, յետոյ ստում է: Յուլիանոս Ուրացոզի նման, Սանատրուկը «մեռաւ յորսի. նետի ուրուք գիպեալ փորոտեացն»:

է. — Արզարի կնոջ Հեզիսէին ուղարկում է Խառան:

ը. — Սանատրուկը նորոգում է Մծբինը:

թ. — Սանատրուկը Մծբնում «զինքն անդրի ի միջին հաստատեաց, մի դրամ ի ձեռին ունելով և այլն»:

ձ. — Սանատրուկ անուան անյաջող ստուգաբանութիւնը « որպէս Թէ սուրբ Սանտուայ »:

ծա. — Հայացումն Ղերուբնայի խոսքն իշխանի, որին խորենացին զարձրել է Արծրունեաց իշխան, սրով զայթազղեցրել է Թովմա Արծրունի պատմիչին (Թ զարու):

### Գ Լ Ո Ւ Խ Է.

Արտաշես Բ-դի սերունդք — Տիրան Ա, Տիրան Բ,

եւ Վաղարշ. (էջ 99-111):

Երուանդի, Արտաշես Բ և նորա որդու Արտաւազդ Բ պատմութիւնը ամփոփուած 24 գլուխներում մինչեւ 61 գլ. Բ գրքի, արդէն հետազօտուած են պրոֆ. խաւթեանցի առաջին երկասիրութեան էջերում (տես «Հայկական վեպ» էջ 209-314): Եղեոսիոյ դիւանին, այժմ իբր աղբիւր, փոխարինում է Ուղիւպ քուրմը Հանւոյ, զորոզ մեհենական պատմութեանց, ինչպէս աւանդում է Բարդաճանը (խոր. գր. Բ. գլ. ԿԶ): Գորանից յետոյ մէջ են բերուած խորենացու Բ գրքի հետեւեալ գլուխները. 62, 63, 64 և 65: (էջ 100-103): Ուղիւպին և Բարդաճանին խորենացին հանաչում է միայն Եւսեբիոսից:

Տիրանի երկու ձիոց և Բզնունեաց իշխան Դատաքէի մասին աւանդութիւնը խորենացին քաղած պիտի լինի Փաւստոսից. կամ զոնէ ազդուած է նորախնից: Դարձեալ կասկածելի է թւում պրոֆ. խաւթեանցին, որ Վաղարշակը օրէնք հաստատած լինէր որ Այրարատում կարող էր բնակուիլ միայն արքայանմիջական ժառանգը. իսկ միւս զաւակները և Արշակ կունեաց ազգի անդամները պարտական էին մնալ Հաշտենից գաւառում: Տիրանն էլ հրամայում է իւր ազգականներին բնակուիլ Աղիովիտ և Առբերանի գաւառներում. և թէ այդ սովորութեան հետեւում էին սերթագաւորները մինչեւ Արշակ Բ-ը, որ Գնէլ եղբորորդուն մինչեւ անգամ հրամայեց սպաննել Այրարատեան նահանգում բնակուելու համար: Ե և Չ դարե,



րի հայ հեղինակները Հաշտեանքը գնում էին Կոփաց աշխարհում, Յունաց և Հռովմայեցոց Կ. Ս. Պ., որ մի ժամանակ առանձին Թագաւորութիւն էր կազմում: Բ-գ նախ քան զՔրիստոս Սելեւկիացոց իշխանութեան հպատակ Հայաստանը բաժանուած էր կրկին Թագաւորութեան՝ Կոփաց և Մեծ Հայոց, որոնց Տիգրան Մեծն միացրեց: Բուզանդացին, զուցէ, գիտէր, որ Կոփաց աշխարհում մի ժամանակ Թագաւորութիւն կար. այս պատճառով Խորենացին, որ միշտ օգտուում էր Փաւստոսից, կարծում է, թէ Հաշտեանք Արշակունեաց թագաւորների սեպհական կալուածքն էին: Կոնստանդինոպոլիսի անուամբ և մեր պատմիչը Աղիսիակի և Առքերանու մասին: Բագրատունեաց Հրէից ծագումից գուրս բերելն դարձեալ անհիմն է Խորենացու կողմից: Տիգրանի պատմութեան համար աղբիւրն — Եւսեբիոսն է. Ռոփի կոյսից Ռոփսեան նախարարութիւնը մասցածին է: Բարգամանի պատմութիւնը վաղարշի, նորա քաղաքների շինութեան մասին յիշեցնում են Սեբիոսի պատմութիւնը: Խորենացու հետեւեալ խօսքերը « Ի գաւառին բասեան, Ի տեղւոջ ուր խառնին Մուրց և Երասխ . . շինեաց (վաղարշ) աւան և կոչեաց վաղարշաւան » ԳԼ. ԿԵ: Յիշեցնում են մեզ Սեբիոսի այս տողերը. « եկն Տամ Խոսրով, և արար երկու կախս, մի՛ Ի բասեան Ի բոլորապահակի, ուր Մուրց և Երասխ խառնին » տես Սեբ. Ս. Պ. բուրգ. էջ 34):

Եթէ, արդարեւ, այստեղ էր վաղարշաւանը, ինչո՞ւ Սեբիոսը կոչում է դորան բոլորապահակ, որ մինչեւ թ դարը ոչ ոքին յայտնի չէ: Եւ պ. Խալաթեանցը կարծում է, թէ Խորենացին հնարել է վաղարշաւանը և Երուանդաւանը: Կոյն խորհրդածութիւններից դերդուած հայ պատմիչը Հայոց մայրաքաղաք վաղարշապատի կամ Կոր-քաղաքի համար հնարել է հնագոյն անուն, կոչելով այն աւան վարդգեսի: Խաղրաց և Բասւաց մասին յիշելն երկրորդ դարում Քրիստոսի դարձեալ կասկած է յարուցանում: Վասն զի այս ազգերը պատմութեան մեջ առաջին անգամ յիշուում են միայն Չ դարում: Վաղարշի պատմութիւնը, հաւանական է կործել, որ Խորենացին մշակել է Ղեւոնդի աւանդութիւնից, որ Ի միջի: այլոց գրում է տիրեցին

ի վերայ աշխարհին Հայոց հիւսիսային ազգն, որ՝ ափն խաղերը, և սպանին ի պատերազմին զիշխանն Գրիգոր (Մամիկոնեան) և զբազումս ի նախարարացն և զիշխանն Վրաց և Աղուանից (տե՛ս Պատմ. Ղեւոնդեայ մեծի վարդապետի Ս. Պետերբուրգ 1887. էջ 16):

Ուրեմն բանից երեւում է, որ խորենացին չունէր և չէր կարող ունենալ ձեռքի տակ ոչ Ռզիւպի մեհենական պատմութիւնքը, ոչ էլ նորա շարունակող Բարդաճանի գրուածքը: Այլ նորա բուն աղբիւրներն էին մի կողմից Հայոց պատմիչներն Եւլ գարեբի՝ Փաւստոս, Սեբիոս, Ղեւոնդ, իսկ միւսից հայերէն թարգմանութիւններն՝ Աստուածաշունչ գրոց, Եւսեբիոսի Քրոնիկոսի, Եգեղ. Պատմութեան, Գրիգորի Նազիանզացու և Կալլիսթոսի:

Մեր կողմից պէտք է նկատենք, որ այս էլ գլուխը հարուստ է ենթագրութիւններով:

## Գ Լ Ո Ւ Խ Ը

Խոսքով Աւայիւն (էջ 112-132):

Ութը տող յառաջաբանից իմանում ենք, որ Խոսքով Ա-նի պատմութեան համար խորենացին օգտուելու է՝ բացի Ազաթանդեղոսից, Բարսումայի և Խոռոհրուտի գրուածքներից: Այս հետեւում են ամբողջութեամբ թ գրքի այս գլուխները՝ 68, 69, 70, 71, 72, 73, 75, 76, 77. էջ 112-117:

Յետոյ 117-ից մինչև 127 էջը ոչ խալսթեանցը կերբում է խորենացու պատմածները, մանաւանդ Գրիգորի Լուսաւորչի ազգական Կամնարականաց մալին, որոնք երբք ցեղի էին բաժանուում - Սուրեն Պահաւ, Կարեն - Պահլաւ և Ապահապետի Պահլաւ. յայտնի բան է, այստեղ խոռոհպուտը և Բարսուման ոչինչ մեղք չունին և խորենացու աղբիւրներն հայ մատենագիրներն են միշտ պայինքն Ազաթանդեղոս, Փաւստոս Ղ. Փարպեցի, Անանիա Շիրակացի, Գրիգոր Արշա-

րունեաց եպիսկոպոսը. իսկ միւս յոյն հեղինակներին, որոնց վրայ մեր պատմիչը ակնարկում է, նա, անշուշտ գիտէր Եւսեբիոսից: (Իսկ Պ. Խալաթեանցի ազբիւրներն են՝ Gutschmidt – Geschichte des Artaschir i Papakan. Թարգ. Nöldeke, de la Garde, Պլուտարքոս, Hübschmann և մեր հին հեղինակները: Թերեւս մուսացուած է Գարագաշեանը, որ յաճախակի առաջնորդում է մեր յարգելի և անխնջ պրոֆեսսորին, նորա երկու ստուար երկերում, նուիրեալ Խորենացու Պատմութեան): « Բացի Եւսեբիոսից Խորենացին ձեռքի տակ ունէր մի ժամանակագրութիւն, որ յիշեցնում է Մալալային և Զատկական Քրոնիկոնը. այսպէս 75-դ գլխում տեղեկութիւնները Անտոնինոս կարակալլայի պատերազմի Պարսից դէմ և նորա մահուան մասին քաղուած են մի կցկտուր ազբիւրից, որ նման է Զատկական Քրոնիկոնին: Բայց եթէ Խորենացին ունենայ յատուկ ազբիւր, նուիրեալ Հայոց այդ ժամանակի պատմութեան, նա մեզ կպատմէր այն հետաքրքիր անցքերի մասին, որ աւանդում է Գիոն կասսիոսը (Lib. XX, II, 12), « ստում է պ. Խալաթեանցը և շարունակում է այսպէս »: Գիոնից երեւում է, որ այդ միջոցին, երբ Անտոնինոսը խաղաց Արեւելք Պարսից դէմ պատերազմելու և նենդութեամբ բռնելով Միջագետաց Թագաւորին, նորա երկիրը հռովմայեցւոց նահանգ դարձրեց, Հայաստանում Թագաւորում էր Սատաբուկի որդի Վաղարշը: Նոյն կերպով Հռովմայեցւոց կոյսրը կամեցաւ վարուել նաեւ Հայոց Թագաւորի հետ. հաշտեցնելու պատրուակով Վաղարշին նորա որդւոց հետ նա, կանչեց նորան Միջագետք և զրկեց ազատութիւնից՝ բայց Հայերը իմանալով այդ, գիմեցին ի զէն և շարաշար ջարդեցին Հռովմայեցւոց »: (Էջ 127-128):

(Սակայն պէտք է յարենք մեր կողմից, որ Գիոնի յիշեալ հատուածի վրայ Գարագաշեանը առաջ էր ակնարկել իւր քննական Պատմութեան. մասն Բ-դ էջ 264-265. ուր կարդում ենք հետեւեալն. « Տեսցուք այժմ, թէ զիարդ գնայր նա (Անտոնինոս կարակալլա) ի պատերազմի: Յետ նենդաւ հաւանեցուցանելոյ զԱրգարոս արքայ Ուռայաստանի գալ տեսանել զնա իբրեւ

բարեկամ՝ կալեալ կապէր զնա շղթայի ք, և այնպէս տիրէր երկրին որ մեացեալ էր անտերունչ: Իսկ զթագաւորն Հայոց (Վաղարշ), որ էր զժտութեամբ ընդ իւր որդիս՝ կոչէր նոյնպէս առ ինքն գրով բարեկամութեան, պատճառանօք համոզելոյ զնոսա ի հաշտութիւն, և զնայր ընդ նմա որպէս գնացն ընդ Աբգարու: Սակայն Հայք փոխանակ յարելոյ ի նա՝ ընթացան ի զէնս, և ոչ ոք այնուհետեւ հաւատայր նմա, մինչեւ ի միտ առնուլ նմա ի փորձոյ, թէ քանի վնասակար է առն թագաւորի վարել նենգութեամբ ընդ բարեկամս: . . . . Թէոկրիտոս զոր առաքեաց նա զօրօք ի վերայ Հայոց՝ մասնէր շարաշար ի պարտութիւն (Գիտն. Հէ. 12, 21). Դորանից յետոյ պ. Խալաթեանցը անհաւատալի է համարում Խոսրովի սպանութիւնը Արտաշէի թելադրութեամբ, Հայաստանի նուաճումը նորանից, Հայոց թագաւորական տոհմի կոտորումը, Տրդատի փրկութիւնը՝ Արտաւազդ Մանգակունու ձեռքով և Խոսրովի դուխտի-Օտա Ամատունու միջնորդութեամբ, Օտայի սպանումը Սիկունի նախարարից և այլն: Վերջապէս Տակիտոս կայսեր պատերազմը Արտաշէի դէմ Հայաստանի պատճառով, որ անհնարին էր, քանի որ Արտաշէիը մեռաւ 241 թ. իսկ Տակիտոսը կայսերական գահ բարձրացաւ միայն 276 թ.<sup>1</sup>:

1. Ըստ Գարագաշեանի, Տակիտոս 275-276 թ. թագաւորեց:

Մ. Շ:

## Գ Լ Ո Ւ Խ Թ .

Մեծ Տրդատ. (էջ 133-153):

Խորենացու երկրորդ գրքից ամբողջութեամբ բերուած են հետեւեալ գլուխները. 79, 82, 85, 74, 80, 78, 81, 84: Ապա՝ մի առ մի ջրում են Տրդատի բուր քաջագործութիւնները թագաւորելուց յառաջ և յետոյ. Խորենացին կամեցել է իւր զիւցազնին նմանեցնել Մեծին Աղեքսանդրին (աղբիւրներն են՝ Ագաթանգեղոս, Եւսեբիոս, Մալալա): Կոռնակ անունը աղաւաղուծն է χερσυνός (չանթ) բառի և Κορνάχος յատուկ անուն է դարձել Եւսեբիոսի բնագրի սխալ թարգմանութիւնից. (ըստ Langlois-ի): Հիւսիսային ազգերի գաղնակցութեամբ Տրդատի արշաւելն Պարսկաստան – Ագաթանգեղոսինը է: Հայոց զօրքերի չորս գնդերի բաժանելն չորս ուղոյն զօրավարների հրամանատարութեամբ – Փաւստոսի հետեւողութեամբն է. Գ. Լուսաւորչի ծննդեան և վարուց պատմութիւնը վերագրուած է մի անյայտ Արտիթէս եպիսկոպոսին: 80-դ գլխում պատահում է « ի կողմնս Գամրաց » դարձուածը, մինչդեռ այլուր նոյն Խորենացին գործ է ածում « Կապադոկիա »: այստեղից պ. Խալաթեանցը եզրակացնում է, թէ, մեր պատմիչը, բացի Ագաթանգեղոսից, ձեռքի տակ ունեցել է և մի այլ աղբիւր, սրից օգտուել է նաեւ Զենոբ Գլաղը: Նոյն գլխում երկիցս հանդիպում ենք Գրիգոր Նազիանզեցու օճերին. « կամք են իմոյս ասել բանի » և « ոչ զպատիւն փնթեանս ձգէր (ս. Բարսեղ) այլ պատիւն զհետ նորա ընթացաւ »: Դա արդէն, ըստ մեզ, բժանդրութիւն է պ. պրօֆեսորի կողմից. Խորենացին քաջ ունարան է և ընտիր ունի գործածելով նա միայն չորսանով ապացուցանում է մատենագրի նուրբ ճշտակը: Մամիկոնեան իշխանների ծագման մասին խօսելիս՝ Խորենացին օգտուել է Փաւստոսից և Սեբիոսից, փոփո-

իւելով տոհմական աւանդութիւնները ո՛չ յօգուտ Մամիկոնեանց: Ալկունեաց ցեղի ջնջումն Մամիկոնեանց նահապետի ձեռքով խորենացու հարածը պիտի լինի: Հին հեղինակներից միայն Եղիշէն է յիշում աննշան Ալկունեաց տոհմի մասին:

## Գ Լ Ո Ւ Խ Ժ .

Մեծն Տրդատ (էջ 154-182):

### II.

Խորենացու Բ. զրբից բերուած են հետեւեալ զուխները՝ 78, 86, 87, 88, 89, 90, 91, 92: Պ. Խալաթեանցը հերքում է Մերուպ վ. Տէր-Մովսիսեանի կարծիքը, թէ Խորենացին չէր չանաչում Սոկրատի եկեղեցական պատմութիւնը և թէ բացի մեզ չհասած Սեղբեստրոսի վարուց խմբագրութիւնից, հայ պատմիչը օգտուել է Ազատանգեղոսի մեր ձեռքը չհասած մասերից<sup>1</sup>: Հետեւում են համեմատութիւններ Սեղբեստրոսի ընդարձակ և համառօտ վարուց խմբագրութիւնների: Այստեղից երեւում է երկու խմբագրութիւնների նմանութիւնը մի և նոյն խօսքերի կրկնութեամբ: « Մի այլ դէպք, ուր Խորենացին ակնարկում է Ազատանգեղոսի վկայութեան վրայ, նկատում է պ. Խալաթեանցը, իմ կարծիքով թիւրիմացութեան արգասիք է »: Ապա բերում է Խորենացու 86 զլիւի այս խօսքերը – « համարձակիմք ասել, առաքելունի եղեալ (հունէ) քարոզեաց ի կղարջաց սկսեալ առ դրամբք Ալանաց և կասբից մինչեւ ի սահմանս Մասքթաց,

1. Հայր Մերուպը, իրաւ որ մարգարէացել է Ազատանգեղոսի մասին. վասն զի Խորենացու կրկին ակնարկներն Ազատանգեղոսի վրայ՝ Մեծին կոստանդիանոսի և Ս. կոյս հունէի մասին այժմ արդարացաւ. (տես Պրոֆ. Մառի հաշիւը չանապարհորդութեան ի Սինայ և Երուսաղէմ): Մ. Ծ:

որպէս ուսուցանէ թե՛ Ազաթանգեղոս >: Վերջինս իւր պատմութեան 120 գլխում շարադրութեան նպն սակ մանները գիտակցեցնում է Գրիգոր Լուսաւորչին: մինչ-գեռ խորենացին տալիս է Նունէին: Ուրեմ, անհասկած խորենացին քաղած պիտի լինի Փոքր Սոկրատից, քանի որ ուղղակի մի բան չկայ նաեւ Վրաց Քրոնիկոսնում: Հետեւում է մի քաղուածք Փ. Սոկրատից: 87 և 88 գլուխները կրում են իւրեանց վրայ Մալալայի կնիքը: նաեւ Փ. Սոկրատի, Շիրակացու և Սբ. Գրոց 89 գլխում յիշեալ եպիսկոպոսների անունները խորենացին կարող էր քաղել մի պատրաստ ցուցակից, որի նմանը հրատարակել է պրոֆ. Գեյցերը (Patrum Nicaenorum nomina latine, graeco և այլն Lipsiae, 1898 թ. էջ 186, 188, 192, 194, 196) 90 գլուխը աւանգուած է ըստ Ազաթանգեղոսի իսկ 91 գլ. հիւսուած է Ազաթանգեղոսից, Փաւստոսից, Գրիգոր Նազիանզացուց, Յայրմուսուրքից և Մեծին Ներսիսի վարուց: 92 գլ. - Փիլոնից, Սազն. - կալիսթենից, Գր. Նազիանզացուց, Ազաթանգեղոսից: Տրդատի մահուան և Թաղման վերաբերեալ տեղեկութիւնները քաղուած են յետին ժամանակի անվաւերագրան գրուածքներից:

### Գ Լ Ո Ւ Խ Ժ Ա.

Խոսարդ Փոքր (էջ 183-204):

Երբորդ գրքի առաջին գլխի բովանդակութիւնը պատմելուց յետոյ, պ. Խալաթեանցը նկատում է « Հայաստանում հնախօսութիւն չլինելու վերաբերութեամբ », թէ խորենացու գանգաւը տարօրինակ է, քանի որ Դ և Ե գարեթի պատմութեան համար, մտաւարապէս հարիւր տարուայ շրջանի, նա ունէր իւր ձեռքի տակ Փաւստոսի, կորիւնի և Ղ. Փարպեցու պատմութիւնը, էլ չենք յիշում Ազաթանգեղոսին, որի վրայ յաւանքն խորենացին էլ ակնարկում է: Առաջին երեք հեղինակների վկայութիւնները ոչ միայն համաձայն են

միմեանց, մինը միւսին հաստատելով, այլ և չզուում են արտաքին, օտար պատմիչներից. մանաւանդ Փ. Բուզանդը Ամսիանոս-Մարկելիկներից, յորոց խորենացին տարբերում է Արշակի, Յորիանոս կայսեր, Պապի պատմութեան վերաբերութեամբ և այլուր: Փաւստոսին չանաչում է բիւզանդական պատմիչ Պրակոպիտոս Կեսարացին, որ նորանից քաղուածքներ է մէջ բերում: Ղ. Փարպեցու պատմածը Պարսից Պերոզ և Վազարշ թագաւորների մասին հաստատում է Յունաց սուղթ ազբիւրներից, զօր. Ազափիոսից: Վերջապէս ի նկատի պէտք է առնել դարձեալ մի հանգամանք. խորենացին, ակնարկելով իւր ազբիւրների վրայ զօր օր. Եւսեբիոսի, Յովսեպոսի, Լաբուրնայի (Ղերուբնայի) Ազաթանզեղոսի, ճշգրտութեամբ չէ հետեւում նոցա և շատ անգամ վերագրում է նոցա այնպիսի մանրամասնութիւններ, որ բնաւ չկան այնտեղ. ուրեմն, թոյլ է տալիս իրան կատարեալ քմահաճութիւն: Ուրանալով և ժխտելով հնախօսութիւնը հին Հայոց մօտ, նա մի և նոյն ժամանակ աւատօրէն օգտւում է վերը յիշուած հայ հեղինակներից և իւր Հայոց Պատմութեան 68 գլուխները յօրինում է Փաւստոսի, Կորիւնի. Ղ. Փարպեցու գրքերից, քանի մի այլ մեր հեղինակներից, որոնք ապրել են Եր գարուց յետոյ և յունաց մատենագիրների հայերէն թարգմանութիւններից: Ապա բերում են Գ. գրքի հետեւեալ գլուխները Մ. Էմինի ուսերէն թարգմանութեամբ. 1, 2, 3, 4, 5 (մասամբ), 6, 7, 8. (էջ 189-192) Խոսքով Բ-գի և առհասարակ Գ գարու պատմութիւնը խորենացին քաղում է Փաւստոսից, որ շատ մանրամասնօրէն խօսում է այդ ժամանակի մասին: Խորենացու Գ գրքի իննը գլուխները քաղուած են Փաւստոսի Գ դպրութեան իննը գլուխներից (3-11): Հետեւում են եօթն կերպուցներ համալայն Փաւստոսի. (էջ 192-196):

Սուրբ Յակոբայ Մծբնայ հայրապետի Պատմութիւնը խորենացին գիտէր Փաւստոսից, բայց, ինչպէս Կերւում է, նա ունեցել է և մի այլ աղբիւր, որ է՝ «Պատմութիւն վարուց Ս. Յակոբայ», ուր մանրամասնութիւնները բաւականին տարբեր են միմեանց (Սոփերք) (էջ 196-199): Խոսքովի մասին մեր պատմիչը վատ է



խօսում (իսկ սորա, այսինքն խոսքովու, զքաջութենէ  
 և զբարի յիշատակաց անփոյթ արարեալ, զբոսանաց  
 հաւարութեանց և այլոց որոց պարապեալ), որովհե-  
 տեւ փաւստսը նորան կոչում է « Կրտակ » մի մա-  
 կանուն, որ խորենացին մեկնում է իբր թոյլ, անզօր,  
 մինչդեռ այդ բառը նշանակում է « Փոքր », « մատ-  
 զաշ » : Միով բանիւ, յարում է պ. խալաթեանցը, այս  
 մականունը ապացոյց չէ թագաւորի հոգեւոր և բա-  
 րոյական յատկութեանց պակասութեան : Նոյն գոյնե-  
 րով խորենացին նկարագրում էր նաեւ Մեծին Տէրբա-  
 նի որդի Արտաւազգին : խոսքովի պատկերը այլ է  
 փաւստսի Պատմութեան մէջ : Արտաշատից դէպի հիւ-  
 միս եղած բլուրը Գուրն կոչելով և մայրաքաղաքը այն-  
 տեպ փոխադրելով, խորենացին մեծ սխալ է անում :  
 Վասն զի վերջին Արշակունեաց, զոնէ Տրդատից յե-  
 տոյ մինչեւ հարստութեան անկումն (428 թ.) մայրա-  
 քաղաքն Վաղարշապատ կամ Նոր-քաղաքն էր : Ար-  
 տաշատը իբր մայրաքաղաք այդ մեջոցին ոչ ոք չէր հա-  
 նաչում, բացի խորենացուց և միայն Ե գարու կիսից  
 Գուրնը աթոռանիստ է դառնում Պարսից մարզպան-  
 ների և Հայոց կաթողիկոսների : Մազքեմաց թագաւոր  
 Սանեսանի դէմ մզած պատերազմում խորենացին Հա-  
 յոց զօրավար է շինում Բագարատ Բագրատունուն,  
 միանգամայն մոռացութեան տալով Վաշէ Մամիկո-  
 նեանին, որ խոսքովից կարգուած զօրավար էր ամե-  
 նայն Հայոց Մեծաց. իսկ « նիզակակիցք նորա էին  
 Բագարատ Բագրատունի, Մեհունդակ և Գարեգին  
 Ռշտունիք, Վահան նահապեան Ամատունեաց ասումին  
 և Վարազ Ամմիական », որոնք չարաչար ջարդեցին  
 Մազքեմաց զօրքը Օշականի ճակատամարտում, ըստ  
 փաւստսի. ուրեմն խորենացին կեղծում է : Արշակու-  
 նեաց թագաւորների և այդ թւում խոսքովի ժամա-  
 նակագրութիւնը խորենացու մտ խառնաշփոթ է :

## Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ .

Տիրաւ Բ. (էջ 205-226):

Բերուած են նախ Գ գրքի հետեւեալ գլուխները. 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17: Գննելով աղթ գլուխները պ. Խալաթեանցը նկատու՛մ է, թէ Փաւստոսից չէ երեւում, որ Տիրանը թագաւորելուց առաջ կարիք զգար Վրթանիսի հետ գնալ Կ.Պօլիս. (Թագ սասնաւու): Դորա նման մի բան տեղի է ունեցած ուշ ժամանակով, Արշակի թագաւորելուց առաջ, երբ Պարսիկները կարացրին Տիրանին (Փաւստոս. Դպր. Գ. գլ. 21) և Հայոց կողմից երկու աւագ նախարարներ Անդակ Սիւնին և Արշաւիր կամարականը անապարտորէցին Բիւզանդիոն Պարսից գեմ օգնութիւն խնդրելու համար. ուրեմն Վրթանէսը վաղուց արգէն մեռած էր այդ միջոցին: Բացի գորանից կամարական իշխանի դիտմամբ մեծացուցանելն Խորենացու կողմից բազում է Փաւստոսից: Նոյն աղբիւրից է առնուած և պատերազմի նկարագրութիւնը, ուր մեր պատմիչը (Խորենացին) ուրանում է Հայոց սպարապետ Վաշէ Մամիկոնեանի գործունէութիւնը, ըստ իւր օտարութեան, Խօսելով Հայոց Արշակունեաց թագաւորների թուականների մասին, գտնէ մինչեւ Վամշապուհը, հին հեղինակները չէին որոշում նոցա թագաւորութեան տարիքը. ուստի նոցա ընծայուած թուականները. պ. Խալաթեանցի կարծիքով, յորինուած են Էրզրաբերի անվաւերական աղբիւրներից: Սոցա թուին դասելու է նաեւ Վարք Սբ. Ներսիսի Մեծի, որ մեծաւ մասամբ համաձայն է Փաւստոսի հետ. բայց նորա մէջ կան և տարբեր բաներ և ի միջի այլոց Ներսիսի մարգարէութիւնը, կազմուած ոչ առանց ազգման յայտնի անվաւերական «Տեւրեան սրբոյն Մեթոդեայ» (տես Ն. Բարս. Սարգիսեանի յօդ. Բազմավէպ Դեկ. 1893. և Յունով. 1894 թ.): Այս վարքը շպետք է շփոթել

Ժ-դ. Մեսրոպ երեցու կազմածի հետ (սպ. Մազրա-  
սում 1775 թ. «Պատմութիւն Յացորդաց Հայոց և  
Վրաց» էջ 55-136), որ յօրինուած է Փաւստոսից:  
Խորենացուն յայտնի պիտի լինի սոյն Վարուց հնա-  
դոյն խմբագրութիւնը, ուստի նա շատ քաղուածքներ  
է անում:

Հիւսիսային ազգերի արշաւանքը Հայաստան Տիրա-  
նի օրերում չէ եղում Փաւստոսից. որ ասում է, թէ  
այդ իրազութիւնը տեղի ունեցաւ Խոսրովի ժամա-  
նակ: Կոստանդոս կայսեր, նորա պատերազմի Պարսից  
դէմ և մահուան մասին տեղեկութիւնները քաղուած  
են Մալալայից, ինչպէս նկատել են իւր ժամանակին  
եղբարք Վիտատնեանք և Կառիերը: Լուսեղէն Խաչի  
մասին Խորենացին կարող էր իմանալ Կիւրդի Երու-  
սազէմացու, և Գրիգորի Նազիանզացու հայ թարգմա-  
նութիւնից. վերջինից նա գիտէր և Յուլիանոսի ուրա-  
ցութեան մասին: Յուլիանոսի պատկերի կանգնումը  
Մոփաց գաւառի արքունական եկեղեցում Խորենացու  
հնարածն է: Դարձեալ՝ նոյն Յուլիանոսի գաշնակիցը  
Պարսից պատերազմի միջոցին ոչ թէ Տիրանն էր, այլ  
նորա որդի Աբշակը, ինչպէս վկայում է Ամմիանոսը,  
որ յայտնի էր նաեւ Փաւստոսից: 12 և 13 գլուխնե-  
րը յօրինուած են Մալալայի ժամանակագրութիւնից:  
Յուսկան մահուան շարժառիթը կայսեր պատկերի խոր-  
տակումը էր, այլ ընտանեկան պատճառներիցն էր,  
ըստ Փաւստոսի: Դանիէլի սպանումն էլ սերտ կա-  
պուած էր Յուսկան մահուան հետ: 14 և 15 գլուխ-  
ները կազմուած են Փաւստոսի հեանեղութեամբ և  
զանազան փոփոխութեամբ, գիտամբ մոռնալով Մա-  
միկոնեան տոհմի հաշակաւոր իշխաններին: Տեղ տեղ  
Խորենացին աշխատում է շմանել իւր ազբիւրներին  
- Փաւստոսին և Վարուց մեծին Ներսիսի: Առաջինը  
համառօտ կերպով յիշում է, թէ Ներսէսը մանկու-  
թիւնից ապրում էր Կեսարիայում, ուր և ամուսնացաւ,  
երկորդը ընդարձակ կերպով պատմում է նորա ընտա-  
նեկան կենաց մասին, թէ նա ամուսնացաւ Վարդան  
Մամիկոնեանի դստեր Սանդիտի հետ, ունեցաւ մի  
զաւակ Սահակ անուամբ, կինը երեք տարուց յետոյ  
մեռաւ, մինչպէս Խորենացին Ներսիսին ամուսնացնում  
է Ասպիոն իշխանի դստեր հետ:

## Գ ՈՒ Լ Խ Ժ Գ.

Արշակ Բ. (էջ 227-260):

Արշակի Թագաւորութեանը խորհնացու պատմութեան մէջ նուիրուած են 18 գլուխներ, Գ գրքի 13-36 գլուխն: Այս հանգամանքի պատճառը խորհնացու գլխաւոր աղբիւրի ընդարձակութիւնն է, այսինքն Փաւստոս Բուզանդը, որ Արշակի մասին խօսում է 59 գլուխներում: Խորհնացին քալլ առ քալլ հետեւում է սուրան: Երկրորդական աղբիւրներն են՝ վարք սբ. Ներսիսի. Սուտ-կալիսթեն, Մալալա և այլն, որոնք ծառայում են մեր պատմչին Փաւստոսի պատմածները յեղաշրջելու և փոփոխելու համար:

Հետեւում են այս գլուխները Գ. գրքի. 18, 19, 20, 21, 22, 23, 24, 26, 27, 28, 29, 30, 31, 33, 34, 35. (էջ 227-235): Ձեռնամուխ լինելով իւրաքանչիւր գլխի քննութեան, պ. Խալաթեանցը ընդգծում է այն ամենայն դէպքերը, ուր խորհնացին հեռանում է իւր բուն աղբիւր Փաւստոսից: 18-դ գլուխը բուրբուղին յեղաշրջուած է. ա. Շապուհ Արշակին Թագաւորեցնում է ոչ իւր կամքով, այլ Հռովմայեցոց կայսեր ստիպմամբ: բ. Արշակ Հայոց սպարապետ է կարգում իւր դայեակ վասակ Մամիկոնեանին, որի տոհմի մէջ սպարապետութիւնը ժառանգական էր. և ոչ թէ Սիւնեաց իշխան վաղինակին (տե՛ս Փաւստոս, Գ. Փարպ. Եղիշէ, Սերբոս. վարք սբ. Ներսիսի). գ. Շապուհ շէր կարող հասնել այս միջոցին մինչև Բիւթանիայ, ուր Պարսք հասան միայն խորով Բ. Պարսիզի ժամանակ, 608 թ: Դա խորհնացու խոշոր ժամանակագրական սխալներից մէկն է, որ սպառնացանում է, ըստ Գուաշ-միզի, թէ խորհնացու Պատմութիւնը շէր կարող յօրինուած լինել նախ քան ի դարն: Վաղենտինոսի յարաբերութեան մասին Պարսից հետ խորհնացին կարող էր իմանալ Սոկրատից կամ Մալալայից: Արշակի

արամարանքը բիւզանդական կայսեր վերաբերութեամբ, ինչպէս վկայում է մեր պատմիչը, հիմնաւոր չէ, քանի որ, ըստ Փաւստոսի և Ամմիանոսի, Արշակը հաւատարիմ դաշնակից էր կայսերց: Վաղենտիանոսի թղթի գոյութիւնն էլ առ Արշակ կասկածելի է, վասն զի արեւելեան կայսրութեան գլուխն Վաղէան՝ էր, իսկ Վաղենտիանոսը արեւմուտքումն էր: 20, 21, 22, 24, 25 գլուխներէ բովանդակութիւնը քաղուած են Փաւստոսից և Ս. Ներսիսի վարքից զանազան փոփոխութիւններով և յաւելուածներով, զոր օր. ըստ Փաւստոսի Շահակը կաթողիկոս էր Ներսէսից առաջ. իսկ այստեղ յետոյ էր. խաղը եպիսկոպոս է Փաւստոսի մօտ. իսկ Խորենացու Պատմութեան մէջ միայն սարկաւազ է և յետոյ ձեռնադրուում է եպիսկոպոս: Թողանա ներքինապետի և ուրիշ անիրաււների սպանումն Վաղենտիանոսի հրամանաւ քաղուած է Մալալայից: Նոյն կայսեր ցասումն Արշակի մօտ ուղարկուած դեսպանների վրայ – Սոկրատից և Սուռ – կալիսթենից է: Գնէլի հօր Տրդատի, Գնէլի, պատմութիւնը թէոզոսի արշաւանքը Հայաստան, Ներսիսի դեսպանութիւնը և այլն բոլորը յօրինուած են Փաւստոսից: Տիրանի մահը իբր թէ Արշակի հրամանաւ՝ հնարած է: 26 և 28 գլուխներում Տիգրանակերտի պաշարման նկարագրութիւնը և առումն քաղուած են Սուռ – կալիսթենից, որ աւանդել է Տիրոս և Թերայ փիւնիկեցւոց քաղաքների պաշարումը Մեծին Աղեքսանդրից: 27, 29, 31, 32, 34, 35 գլուխներում աւանդուած Արշակի և նորա նախարարների մէջ ծագած պատերազմի նկարագրութիւն (Արշակաւանի պատճառով) Փաւստոսից է: Բաւական մանրամասն աւանդում է յիշեալ գլուխների բովանդակութիւնը մանր ու մունր նկատողութիւններով պ. Խալաթեանցի կողմից, որ աւելորդ եմ համարում երկրորդել այստեղ, քանի որ դա շատ կեռու կտանէր մեզ. մենք դիտաւարութիւն չունինք ամբողջ գիրքը թարգմանելու. այսքանը միայն կասենք, որ Խորենացու աղբիւրներն են բացի Փաւստոսից Վարք Ս. Ներսիսի, Մալալա և այլն:

## Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ

Պատ. եւ Վարազդատ (էջ 261-274)

Պապին խորհնացին նուիրում է 3-4 կարճ գլուխներ (36-39). իսկ փաւստոսը 35 գլուխ. Վարազդատին — միայն 40դ գլուխը, իսկ փաւստոսը երեք ամբողջ գլուխներ: Բերուած են ամբողջութեամբ հետեւեալ գլուխները Գ. գրքի. 35, 37, 38, 39, 40:

Բիւզանդիոյ կայսեր Վաղեսի օրերում Հայաստանում յիշուում է մի թագաւոր, որին բոլոր պատմիչները, առանց բացառութեան, կոչում են Պապ, առում է Պ. խալսթեանցը: Կոյն թագաւորի մասին մանրամասնօրէն փօսում է և հռովմայեցի պատմիչ Ամմիանոսը, անուանելով Պապին Para, որ ծագել է ձեռագիրներում p կ ռ գրերի նմանութիւնից. բայց վատիկանի թ գարու գրչագրում — Papa. է գրուած. (Gardt. hausen. vol. I-II, Lipsiae, 1874 և այլն):

Դառնալով խորհնացու ընագրի քննութեան՝ յարգելի պրօֆեսորը նկատում է, թէ, ոչ միայն Պապը, այլ և նորա յաջորդ՝ եղբորորդին Վարազդատը չէին կարող թագաւոր կարգուել Մեծին Թէոդոսից, որովհետեւ Պապը գաւառնութեամբ սպանվեցաւ Վաղեսի ժամանակ 374 թ, իսկ Վարազդատը գահընկէց եղաւ թագաւորութիւնից երեք տարի դորանից յետոյ, այն ինչ թէոդոսը գահ բարձրացաւ 379 թ: Յունաց Ագգէ կոմսը և Տերէնդ զօրավորը չէին կարող ուզարկուել Թէոդոսից Հայաստան, լատն զի նոքա երկուսն էլ ընկած էին Ագրիանապօլու ճակատամարտում 368 թուին, երբ ընկաւ ինքն Վաղէսն էլ: Փաւստոսից յայտնի է, որ Պարսից Շապուհը իւր քոյր Ռոմզուլտինն ի կնութիւն տուեց Վահան Մամիկոնեանին. իսկ խորհնացին միշտ արհամարհելով Մամիկոնեան տոհմը, Շապուհի փեսայ է շինում Մերուժան ուրացողին: Դարձեալ՝ փաւստոսի երեք պատերազմները, որոնք տեղի ունեցան Մու-

չեզ Մամիկանեանի սպարապետութեամբ Դարանազեաց գաւառում, Ասորգատականում և Բագրեւանդում, Խո-րենացին միացնում է Ջիրու գաշտում և Մուշեղից յազթանակը կապուելով ընծայում է իւր սիրեցեալ Բագրատունեաց Մմբատին: Պատերազմի նկարագրութիւնն էլ, ուր « հողմ սաստիկ ի մերոցն կուսէ ընդդէմ պարուկանին փչեալ » յիշեցնում է Սոկրատի աւանդու-թիւնը՝ նուիրեալ Մեծին Թէոփոսի և Եւզենեայ պա-տերազմին: Դարձեալ՝ այս գարձուածները « զվիշա-պացն մանուածս ահագին բերանարացութեամբ » քա-ղուած են Գրիգոր Նաճիանձուց: « Ետոց յուովք ի ջգեայ և ի կաշեայ պահպանակաց զգեստուն զկաթրու-թեան զիմաց բերէին երեւոյթս » – Մակարայեցւոց Ա գրքից է: Վերջապէս. « ջեռուցեալ ... և յոմ ար-տաշէկ արբեալ » երեւի Փիլոնից են աւանդած: 38 և 39 դուրիները համառօտուած են և փոփոխուած փաւա-տոսից և շափազանց կցկտուր: Այստեղ, ի միջի սյ-ւոց, Պապ. « զեզ մահու գաղտնի արբուցեալ սրբոյն Ներսիսի՝ ելլած ի կենցաղոյս »: Այս առթիւ Պ. Խա-լաթեանցը ասում է. « եթէ փաւտոսի վկայութիւնը հաւատարիմ եւս չանաչենք, թէ նա թունաւորեց Նէր-սիսին, դորա պատճառը հայրապետի կշտամբանքը չէր Պապին՝ նորա ամօթալի ախտերի համար: Այստեղ կար աւելի ծանրակշիւ, քաղաքական պատճառ. այն է ընդ-հարու՛ն մարմնաւոր և հոգեւոր իշխանութեան կետ: Բանն այն է, որ Պապը, ինչպէս մասամբ և նորա հայ-րը Արշակը հոգեւորական դասին Մեծին Տրդատից ըն-ծայուած ընդարձակ հողային կալուածքները անհամա-պատասխան էին համարում դոցա նպատակին: Ինչպէս յայտնի է, լաւագոյն և բերրի հողերը՝ երկրում պատ-կանում էին հոգեւորականութեան: Արդարեւ դպրոց-ների, հիւանդանոցների և այլ աստուածահանոյ հաս-

1. Տեսանէր (Հայր մարդպետ) զգեզեցկութիւն վայ-րացն, զնիստ շքեղութեան ի բարձրաւանդակ տեղեացն և զհայեացն ի խոնարհ, զի կարի վայելուչ էր տե-ղին. և շարահնեաց. Փ. Բուզ. դպ. Գ զլ. 15):

տատուութեանց շինութիւնը հոգեւորականութեան պարտականութիւնն էր, որ ծախսում էր գոցա վրայ յիշեալ կալուածներից ստացած արդիւնքը. սակայն հագեւորութեան կողմից թույլ տուած նկատելի զեղծումնն՝ ինչ էին արդիւնքների բաշխման մէջ և նորանօր հազարաժինների գրաւումն, կամ ինքեանք թագաւորները, մեծամեծ գրամական աղբիւրների կարիք ունենալով, իրեանց անդադար պատերազմների համար, նախանձուտ աչքով էին նայում եկեղեցական հարուստ և շէն կալուածքների վրայ, ինչ և իցէ, բայց արդէն Արշակի ժամանակ խնդիր էր արծարծուած յարբուսիս գարձնել յիշեալ կալուածքներից մի քանիսը<sup>2</sup>: Առաջին փորձը անյաջող էր. Հայր մարգարեւոր սպանուեցաւ, գուցէ ոչ առանց մասնակցութեան հոգեւորականութեան և Արշակը թողեց այդ բարենորոգման միտքը: Պայքը դահ բարձրանալով, նոյն խնդրի առթիւ՝ սկսեց մեծ վէճ Ներսիսի հետ, որին, ինչպէս ասում է Փաւստոսը, նա թունաւորեց: Ներսիսի մահից յետոյ, Պայքը առանց գծուարութեան իրագործեց յիշեալ բարենորոգումը, գրաւելով յարբուսիս եկեղեցական կալուածքների<sup>5</sup>/7 մասն, և թողնելով յօգուտ եկեղեցու<sup>2</sup>/7. (յեւթն հողոյն զհինգն հատանէր յարբուսիս, և գերկուսն միայն թողոյր երկուս հողս Փ. Բուզ. դպ. Ե. գլ. 31): Ահա այսպիսի պետական կարգադրութիւնների պատճառաւ Պայքը զրգոեց իւր դէմ Հայոց հեղինակների և ի մասնաւորի Փաւստոսի թշնամութիւնը այն ինչ Ամմիանոսի վկայութեամբ այս երիտասարդ թագաւորը համեստ, առաքինի և հայրենասէր տէր էր. իւր երկրի և զո՛հ գարձաւ միայն Տերենտիոսի քսութեան: 40դ գլխում Խորենացի՛ն Փաւստոսի Բ էջում պատմածը վարազդատի մասին՝ համառօտել է, համարեա, մէկ իջում, մտցնելով այնտեղ զանազան քաղուածքներ Սուրբ գրքից, Սուտ կալիսթենից, Եւսեբիոսից: վարազդատին Պարսից բարեկամ լինելով ապա ուրեմն, թշնամի կայսեր, Խորենացին աշխատում

2. Ածա խնդրի մասին տե՛ս Գարագաշեան ֆն. Պատ. Մ. Գ. էջ 146-150: Մ. Ե:



է խորշէլ Մանուէլ Մամիկոնեանի անունը տալուց, որի երեսից վարազդատը փախաւ, իբրեւ Մուշեղի սպանիչ:

## Գ Լ Ո Ւ Խ Ժ Ե

Արշակ Գ եւ բաժանունն Հայաստանի խոսրով Գ  
եւ վառարարուն. (էջ 274—305).

Այս բաժնում բացի ֆաւստոսից, խորհնացին օգտուում է Ղ. Փարպեցու Պատմութիւնից:

Բերում են հետեւեալ գլուխները Գ դրքի. 41, 42, 43, 44, 45, 46, 48, 50, 51, 55, 56, 59:

Դիմենք նախ 41 և 42 գլուխներին, որոնց հիմքն է նոյն ֆաւստոսն, այնտեղ էլ մեր հեղինակը իբրև հաւատարիմ է մնում և հակառակ իւր աղբիւրին, Արշակին և վաղարշակին կապում է Թէոդոս կայսեր հետ, որպէս զի չյիշէ Մանուէլ Մամիկոնեանի մասին. իսկ նոցա մօրը ուղարկում է Կ. Պօլիս, իբրեւ պատանդ, թէեւ ըստ ֆաւստոսի, նա մնում է Հայաստանում: Արշակին ամուսնացնում է Սիւնեաց իշխանուհուն և ոչ Մամիկոնեանց, ինչպէս ֆաւստոսն է վկայում: Յառաջ քան դիմեն իւր միւս աղբիւր Ղ. Փարպեցուն, խորհնացին 42—46 գլուխներում պատմում է Յունաց և Պարսից բաժնի հայ թագաւորների այն է՝ Արշակի և խոսրովի երեւակայական և շեղած պատերազմները, ուր ի միջի պլոց, յառաջ է քաշում Գաղառն կամսարականին: Վերջապէս մեր պատմիչը դիմում է Ղ. Փարպեցուն և կորիւնին, յորոց երկերից նա յօրինում է իւր Հայոց Պատմութեան երրորդ և վերջին դրքը: Անդադար քաղելով այս հեղինակներից, նա աշխատում է ծածկել նոցա անունները, պատմել իրողութիւնները իբրեւ ժամանակակից Սահակայ և Մեսրոպայ. իսկ հնաբանութեան կողմից նա շատ շահուում է Սոկրատից, Սեղբեստրոսի վարքից, մանաւանդ սուս — կալիսթենից, Փիլոնից, Գրիգոր Նազիանզուց:

Ընդհանուր պատմութեան վրայ յենլով, Պ. Խալաթեանցը հերքում է, առանց գծուարութեան խորհնացու երկի պատմական մասն, նորա տգիտութիւնը և անտեղեակ լինելն մեր տոհմական պատմութեան. զոր օր. Սահակ Պարթեւին խորհնացին հարկադրում է գնալ Պարսկաստան, իւր դստեր խնդիրքով, իւր փեսայ Համազասպ Մամիկոնեանի համար բարեխօսելու: Մի՞թէ խորհնացին չգիտէր, որ ասպետութիւնը Բագրատունեաց ցեղում և սպարապետութիւնը Մամիկոնեանց տոհմի մէջ ի հնուց ժառանգական էին Հայաստանում և կարիք չկար հաստատելու Պարսից թապաւորի կողմից: Դարձեալ՝ Ղ. Փարպեցուց մեզ յայտնի է, որ Սահակը գնաց Պարսկաստան Վառմի (420-428թ) ժամանակ մանուկ Արտաշրի մասին վկայութիւն տալու, այն ինչ խորհնացին Սահակին չորս անգամ գնալ է տալիս Պարսից դուռն. Ա. Արտաշիր Բ. օրերում (379-383). Բ. Յազկերտ Ա. (399-420). Գ. Վառմի և վերջապէս Սահակը Պարսկաստան է գնում շորթորդ անգամ, յայտնի չէ, թէ ինչ պատճառներից դրդուած: Այդ խօսվում է դահանամակի մասին, ուր գրուած են Հայոց նախարարական և իշխանական տոհմերի անունները: Պարսից թագաւորների ժամանակագրութեան մէջ, խորհնացին տեղ տեղ տարբերում է Ղ. Փարպեցուց:

### Գ Լ Ո Ւ Ի Ժ Զ

Վառմիպուն. Սահակ Պարթեւ եւ Մ. Մաշտոց  
(էջ 306-335)

Բերուած են Գ գրքի հետեւեալ գլուխները, 47, 49, 52, 53, 54, 57, 58, 60, 61, 62: Նախ պրօֆեսորը խօսում է Մաշտոցի վարուց կրկին խմբագրութեանց մասին, որ լոյս տեսան ի վենետիկ 1838 թ. և 1854 թ. յետոյ ուշագրութիւն է դարձնում այն հանդամանքի վրայ, որ մինչեւ ը դարը Հայոց նշանադրերի հնարողին կոչում են միայն Մաշտոց. (մեր և օտար պատ-

միշները): Խորենացին լոկ միանգամ տալիս է նորան այս անունը, իսկ 30 դէպքերում անուանում է Մեսրոպ, և այս անունը այնուհետեւ կրկնում են Խորենացուց յետոյ միւս մեր հեղինակները: Ապա հետեւում է Մաշտոց բառի ստուգաբանութիւնը, որ, ըստ պ. Խալատեանցի, ծագում է մաշտել – մաշտ բայից, նշան. մաշերը թափիլ: Ինչ և իցէ Մեսրոպի բուն անունն էր Մաշտոց: Ապա գալիս են Սահակին և Մաշտոցի, մեր բանասիրաց քաջ յայտնի, պանծալի գործերը, նշանագրերի գիւտը, Սուրբ Գրոց թարգմանութիւնը, Խորենացու առանձին զարձուածների ու ոճերի վերլուծումն, քաղուածքները Փիլոնից, (գլ. 12), Գրիգոր Նաճիհանձուց. Անանիա Շիրակացուց, մանաւանդ Հանապարհորդութեան նկարագրութիւնը:

### Գ Լ Ո Ւ Խ Ժ Է

Արտայիր եւ Հայոց Արտիկունեաց անկումն

(էջ 336-368):

Այս վերջին գլխի բովանդակութեան նիւթ են Խորենացու Գ. գրքի վեց գլուխներն, որոց աղբիւրներն բացի Ղ. Փարպեցուց և Կորիւնից, կազմում են՝ Գրիգոր Նաճիհանձին, Փիլոն եբրայեցին, Վարբ ս. Սեղբեստրոսի հայ. թարգմանութեամբ Է գարու և այլն:

Բերուած են այս գլուխները՝ 63, 64, 65, 66, 67, 68 (էջ 336-345): Խորենացու աւանդածը ստուգելու գիտաւորութեամբ, յարգելի պրոֆեսորը՝ յենլով Ղ. Փարպեցու պատմութեան վրայ, համառօտ ակնարկ է նուիրում Հայաստանի այն ժամանակուայ քաղաքական գրութեանը, որ նորութիւն չէ կարող լինել հայ և օտար բանասիրաց համար: Ապա մի առանձին, թերեւս աւելորդ ջանասիրութեամբ և մանրազնին քննութեամբ բացատրում է ու որոշում, թէ Խորենացին ո՞ր բառը, ո՞ր կամ զարձուածը ո՞ր տեղից և ի՞նչ հեղինակներից փոխ է առել կամ քաղել: Օրինակի համար իւր ողբի

ընարանը մեր պատմիչը առել է Գ. Նաճիանձու ներ-  
բողից, նուիրեալ Անտիոքի եպիսկոպոս Մելեաթոսի  
յիշատակին: Ինչ որ խօսուում է այդ ճառում Մելե-  
աթոսի և Անտիոքի եկեղեցու մասին, Խորենացին վե-  
րագրում է Սահակին, Մաշտոցին և Հայոց եկեղեցուն  
քանի մի բան էլ յարում է իւր կողմից: Բացի Ներ-  
բողից, Խորենացին օգտուել է նաեւ նոյն Նաճիանձու  
այլ ճառերից, Փիլոնից, Սուրբ Գրքից, Ղեւոնդից  
(ՂԳ): Իւր եզրակացութիւնների մէջ (էջ 369-378), մեր  
անխոնջ պրօֆեսորը մատնացոյց է լինում Խորենացու  
մտացածին և իրական աղբիւրների վրայ, որոնք արդէն  
յիշդուած են իւրեանց տեղում, հերքում է նորա երկար-  
ամեայ պատմական հեղինակութիւնը մեր հին մատե-  
նագրութեան մէջ, ասելով թէ՛ այնուհետեւ յառաջ  
պէտք է մղել մեր միւս պատմիչներին, որոնք Խորե-  
նացու շնորհիւ մինչեւ ցայժմ ըստ արժանւոյն չէին  
գնահատուած: Դորանից յետոյ Խորենացին գրուատ-  
ում է, իւր լեզուի վսեմութեան, ոճերի ու դարձ-  
ուածների գեղեցկութեան կողմից, իբրեւ առաջնակարգ  
հիանալի մատենագիր, որ առաջին անգամ փորձ փոր-  
ձեց տալ մեզ սխտեմատիք և գեղարուեստական կեր-  
պով աւանդուած սկզբնական Հայոց Պատմութիւն, տո-  
գորուած զուտ ազգային ոգւով - մի հանգամանք, որ  
չէր կարող Ֆեալ՝ առանց խոր ազդեցութիւն գործելու  
իւր հայրենակիցների վրայ թէ՛ հոգեւոր և քաղաքա-  
կան տեսակէտից: Գրքիս երկրորդ մասն կազմում են  
նիւթերը (էջ 1-143). բաղկացած դարձեալ 17 գլուխ-  
ներից:

Կնքելով այստեղ մեր ընդարձակ գրախօսութիւնը,  
մեր կողմից կը նկատենք. թէեւ գիտնական պրօֆեսո-  
րի քննութեան կէտերէն մի քանիսը, գուցէ, վիճելի  
են, սակայն չէ կարելի զրոյստակառիլ զործի ընդարձա-  
կութեան առաջեւ, որի վրայ Պ. Խալաթեանցը տաս-  
նեակ երկար տարիներ է աշխատել և նա իրաւունք  
ունի ասելու՝ quod potui, feci, faciant meliora po-  
tentes.